




ՀԱՅ Դ Գ Ա Մ Ս Օ Ը Ա Ք Ե Ի Ր

# Հոգի և ամանք Հարգանք Ընդդեմ Ընդվզանք

...national relations, to respect  
...intervention in internal affairs of ou  
...intenance of an atmosphere o  
...the strengthening of peace,  
...to refrain from the threat or the use  
...protect human rights and fundamental free  
...border between the two countries as defu  
...they incompatible with the spirit  
...extremism irrespective of their cause, pleda  
...to cooperate in combating against them,  
...course for their relations on the basis of comp  
...understanding and harmony.  
...ate of the entry into force of this Protoo  
...c Relations of 1961 and to exchange Diplo  
...f Bilateral Relations between the Repub  
...ce on the same day, i.e. on the first day  
...lish authentic copies in duplicate.  
FOR THE REPUBLIC OF  
TURKEY



## ԴՐՈՇԱԿ




Ս Ե Պ Տ Ե Մ Ք Ե Ի Ր N9  
(1612)

2009

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատկերասրբ





## «Դրօշակ»

ամենամսյա պաշտոնաթերթ  
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝  
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ Կ. Խանլարյան  
Համակարգչային շարվածքը՝  
Ս. Խաչատրյանի  
Ձեռավորումը՝ Ս. Հովսեփյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երեւան, 375010, Մհեր Մկրտչյան 12/1  
Հեռ. 521 876  
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,  
ARF dashnaksoutiun publication

Editor-in-Chief: Rouben Hovsepien

12| 1 Mher Mkrtychian, Yerevan, 375010  
Tel. 521 876  
e.mail: droshak@arf.am

### Խմբագրական

Պարտադրուած դայմաններ՝ առանց նախադայմանների 2

### Հարցազրույց

Թուրքիայի ոճը անհարիր է հարաբերություններ հաստատելու  
հարթությանը 5

### Սոցիալ-սնտեսական

Տնտեսական միջեր եւ իրական տնտեսություն - 2 9

### ԼՂՀ հիմնախնդիր

Ազատագրված տարածքների դասմական նշանակության  
հարցի շուրջ 14

### Հայ դաս

Ինչո՞ւ չի կարելի ստորագրել Կարսի դայմանագիրը 20

### Տեսակետ

Ժամանակակից Հայոց դասնութիւնն ու  
յաղթանակի տեսութեան անհրաժեշտութիւնը 24

### Տարածաբան

Ազգայնամոլությունը խարխուլող թուրքական ինքնության  
համայնադասկերում 32

### «Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Թիրքիա (հասուած) 45

### Նոր գրքեր

Քաղաքներու կախարդանքը 46

### Պատկերասրահ

Տիգրան Բարխանաջյան 48



# Պարտադրուած պայմաններ՝ առանց նախապայմանների

**2009**թ. օգոստոսի 31-ին հրադարակուեց Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման ու զարգացման հետ կապուած երկու նախաստորագրուած արձանագրութիւն:

ՀՅ Դաւանակցութիւնը սեղանքերի 1-ի յայտարարութեամբ յայտնեց իր խիստ վերադասութիւնը նախաստորագրուած արձանագրութիւնների նկատմամբ, շեշտելով, որ. «ՀՀ արտաքին քաղաքականութիւնը շեշտելի զարգացումները կարող են անդառնալի հետեւանման ունենալ»: Ազգային եւ յետական շահերից ելնելով եւ հարցին տրամաբանական լուծում տալու նպատակով, սեղանքերի 15-ին հրադարակուեց արձանագրութիւնների բարեփոխման համար ՀՅ Դաւանակցութեան առաջարկած փաթեթը:

«Երկկողմ յարաբերութիւնների զարգացման» եւ «Դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու» մասին արձանագրութիւններում յարաբերութիւններ կան, որոնք ֆորմալուած կերպով վկայում են հենց

այն նախապայմանների մասին, որոնց «չգոյութեան» կամ «բացառման» համար բազմաթիւ անգամներ հաւաստիքներ են տուել իշխանութիւնները: Որո՞նք են մեզ մտահոգող գլխաւոր կէտերը:

«Դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու» մասին արձանագրութեան մէջ վերահաստատում են «*հաստատութեան, ինքնիշխանութեան, այլ յետնութիւնների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային անբողջականութեան եւ սահմանների անխախտելիութեան սկզբունքները յարգելու իրենց երկկողմ եւ բազմակողմ յարաւորութիւնները*»: Մի՞թէ դժուար է հասկանալ, որ այս կէտը ուղղակիորէն ադերս ունի Արցախեան հարցի հետ: Այս կէտում շատ յարզ ու յսակ դրուած է այն կադանքը, որի հիման վրայ Հայաստանը յարտաւոր է ձանաչել Ադրբեյջանի Հանրադետութեան տարածքային անբողջականութիւնը եւ «չմիջամտել» այդ յետնութեան «անբաժանելի» մասը համարուող Արցախի հետ կապուած հարցերին: Մի՞թէ անգէն աչքով էլ չի երեւում, որ, ըստ նա-

խասուրագրուած արձանագրութեան, Արցախեան հարցը դառնում է Ադրբեջանի ներքին խնդիր: Սա հէնց այն կարեւոր «նախադրական»-ներից է, որ Թուրքիան շարունակ փորձում է դարձնել մեզ, այս անգամ արդէն որդէս լիարժէք «դրական»:

Նոյն արձանագրութեան մէջ նաեւ վերահաստատում է *«երկու երկրների միջեւ գոյութիւն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանուած միջազգային իրաւունքի համադաստիսան դրականագրերով»*: Սկզբում անընթացի իր թում «վերահաստատում» բառը: Այդ ե՞րբ էր իրաւականօրէն **հաստատել** ներկայիս ընդհանուր սահմանը Հայաստանի եւ Թուրքիայի Հանրապետութիւնների միջեւ, որ հիմա էլ **վերահաստատում** է: (Ի դէպ, դիմելով եւ գերակայութիւն սալով անգլերէն տեքստին՝ դարձում ենք, որ արձանագրութեան մէջ նշում է հէնց **confirming** - հաստատել բառը եւ ոչ թէ **reconfirming**-ը՝ վերահաստատել, ինչն էլ բազմադասկում է մեր մտածողութիւնը: Եթէ դուրս **վերահաստատելու** խնդիր, ինչ-որ միամիտ լուստեսութեամբ կարելի կը լինէր մտածել, թէ խօսքը վերաբերում է ՄԱԿ-ի, ԵՄ-ի կամ այլ միջազգային իրաւական ակտերին, ուխտերին, որոնք նախադրել, ինքնուրոյնաբար, **հաստատել** են երկու դեպքերի կողմից ու հիմա միայն մնում է, որ ձեւականօրէն **վերահաստատեն**: Սակայն երբ գործածուում է **հաստատել** բառը «գոյութիւն ունեցող» սահմանի մասին, դա, ոչ աւել, ոչ դակաս, առընչում է Կարսի ադրիանի դրականագրին, որի ստորագրող կողմերը 1921 թ. միջազգայնօրէն ճանաչուած իրաւական սուբյեկտներ չեն եղել: ՀՀ կողմից երբեք չվերացուած դրականագրի յուշագրային հաստատումը, ինչպէս նախատեսուում է արձանագրութեամբ, նշանակում է մէկընդմիջ մոռանալ Սեւրի դրականագրից բխած տրամադրութիւնը եւ, փաստօրէն, չեղեալ համարել Վիլսոնի իրաւարար վճիռը):

Բնաւ դաստիարակ չեն թուրքական կողմի խորամանկ փայլերը Թուրքիայի սարածքային ամբողջականութեան ճանաչման մասին՝ Հայաստանից որեւէ հաստատում կորզելու ուղղութեամբ: Նրանց հմուտ դիւանագետները, ի սարբերութիւն մերոնց, փայլուն գիտակ են եւ Սեւրի դրականագրի, եւ, յակադէպ, Վիլսոնի իրաւարար վճիռի իրաւականութեանն ու օրինականութեանը: Նրանք գիտակցում են, որ Թուրքիայի սարածքային ներկայ ամբողջականութեան դաւադրանք, նշում իրաւականութեանն ու օրինականութեանն ոչնչացման միակ

ձեւը Հայաստանի Հանրապետութեան ինքնակամ հրաժարումն է: Սա հայութեան ոչ միայն ներկայի, այլեւ ապագայ սերունդների անկառայելի իրաւասիրութեան հարցն է: Հետեաբար, մեր բռնագրաւուած սարածքների վրայ ՀՀ ինքնիշխանութեան սարածումը հաստատող միակ դրականագրից եւ հայ-թուրքական սահմանը բնորոշող միջազգային իրաւարար միակ վճիռից հրաժարուելու իրաւունքը չունի հայկական ոչ մի իշխանութիւն: Սա գրուած ու չգրուած օրէնքներից էլ վեր եւ դեռական բոլոր սկզբունքների հիմքը կազմող ազգային արժեքն է:

Իշխանութիւնները փորձում են համոզել, թէ սարածքային ամբողջականութեան սկզբունքի յարգումը ՄԱԿ-ի անդամ երկրների համար արարողակարգային դարձաւորութիւն է: Եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ է, առանձնապէս լոկալ շահերով, հաստատում արարողակարգը: Բարեբախտաբար միջազգային դրականութեան փնտրումն այն դրականագրերը, որոնց միջոցով սարբեր երկրներ կարգաւորել են իրենց միջդեռական յարաբերութիւնները: Պատմական հանգամանքների որոշ նմանութեան տեսակէտից, ուսուցողական կարող է լինել Էրիսթի եւ Սուդանի միջեւ 1999 թ. ստորագրուած համաձայնագիրը, որի մէջ ոչ մի նշում չկայ միմեանց սարածքային ամբողջականութեան ճանաչման մասին: Թող յստակ լինի, որ Կարսի դրականագրի հաստատումը «դրոսկոլային» դարձաւորութիւն չէ, այլ թուրքական նախադրական, ինչը լուստեսութեամբ է «Դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու» մասին արձանագրութեան մէջ: *«Ասեմ նաեւ, գրուած է ՀՅԴ առաջարկութիւնների փաթեթում, որ դիւանագիտական յարաբերութիւնների վերաբերեալ 1961 թ. Վիեննայի կոնվենցիան եւ սահմանների փոխադարձ ճանաչում չի նախատեսում: Այն ենթադրում է միմիայն դեռութեան եւ կառավարութեան ճանաչում: Սահմանների որոշման եւ ճանաչման հարցը բոլորովին այլ ոլորտում է եւ կարգաւորում է սահմանակից երկրների միջեւ կնքուող համադաստիսան դրականագրերով»*:

«Երկկողմ յարաբերութիւնների զարգացման» արձանագրութեան մէջ եւ «Յաւելուած»-ում նախատեսուած է, ի թիւս մի քանի միջկառավարական յանձնաժողովների, կազմել նաեւ «դաստիարակ հարթութեամբ զբաղուող ենթայանձնաժողով», որի նպատակն է *«երկու ժողովուրդների միջեւ փոխկրթականութեան վերականգնմանն ուղղուած երկխօսութեան իրականացում, այդ թում՝ դաստիարակ*

փաստաթղթերի եւ արխիւների անկողմնակալ գիտական ուսումնասիրութեան միջոցով գոյութիւն ունեցող խնդիրների յսակեցման ու առաջարկների ձեւակերտման համար»: Իշխանամէս վերլուծաբանները հրճում են եւ յոյս յայնում առ այն, որ կազմուելու է ոչ թէ «դասնաբանների յանձնաժողով», այլ՝ «դասնական հարթութեամբ զբաղուող ենթայանձնաժողով»: Թէ ինչն՞ է, էադէս, սարբերում նախկին եւ ներկայ ձեւաչափերը եւ ո՞րն է անհմաս բառախաղի բուն իմաստը, դժուար չէ հասկանալ:

Մեր չինովնիկները փորձում են միամտացնել հանրութեանը, թէ արձանագրութեան մէջ ոչ մի նշան չկայ Յեղասպանութեան մասին: Հարց է առաջանում. երկու ժողովուրդների միջեւ, ֆոլկլորիկ, ազգագրական եւ մի փոքր էլ դասնաճարտարապետական մանրութեանց բացի, «դասնական հարթութեան» վրայ ուրիշ ի՞նչ հարց գոյութիւն ունի, որ, ըստ էութեան, չի առընչում Հայոց Յեղասպանութեանը: Առհասարակ ի՞նչ հարցեր կարող են գոյութիւն ունենալ, որոնց շուրջ «արխիւների անկողմնակալ, գիտական ուսումնասիրութեան միջոցով» յասկադէս, հնարաւոր է վերականգնել փոխվստահութեան մթնոլորտը: Իսկ ի՞նչ է նշանակում «գոյութիւն ունեցող խնդիրների յսակեցումը», եթէ ոչ Հայոց Յեղասպանութեան փաստի գոյութեան-չգոյութեան **յսակեցումը**:

Պարզից էլ դարձ է, որ միջկառավարական այդ ենթայանձնաժողովի իսկական առաքելութիւնն է լինելու Հայոց Յեղասպանութեան իրողութեան վիճարկումը: Թուրքերը կը մերժեն, մերոնք կը լուրջեն, եւ այդ ադարդին, փակուղային յանձնաժողովի գոյութեան մասին տարիներ ու տարիներ աշխարհի ականջը խլացնող թուրքական ֆարոզամեքենան իր թմբկահարումներով ակփօրէն կը յորդորի տարբեր

երկրների՝ հեռու մնալ Հայոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացից: «Չի կարելի թոյլ տալ, որ թուրքական հնարաւորութիւնը ստանայ շահարկել այս ենթայանձնախմբի գոյութիւնը՝ շարունակելով ուրացման ֆաղափականութիւնը եւ մոլորեցնելով միջազգային հանրութեանը: Յեղասպանութիւնը իրողութիւն է: Հայաստանը այսօր Թուրքիայի առաջ այն ճանաչելու նախադրման չի դնում, բայց եւ չի կարող հարցականների դուռ բացել: Աշխարհի 20 երկրներ, բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններ ճանաչել են այն, այս թեմայով գիտական, անկողմնակալ ուսումնասիրութիւնների ժամանակը վաղուց անցեալում է: Այս խնդրի վերաբերեալ Հայաստանի ռազմավարութիւնը յսակ ձեւակերտուած է ազգային անվտանգութեան հայեցակարգում»: Այնուամենայնիւ այդդիսի ենթայանձնաժողով, իր կանխատեսելի գործառնոյթով, ոչ թէ ծառայելու է հայ եւ թուրք ժողովուրդների փոխվստահութեան մթնոլորտի վերականգնմանը, այլ խոչընդոսելու է Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը եւ ստեղծելու է համայն հայութեան եւ ՀՀ իշխանութիւնների միջեւ անվստահութեան մթնոլորտ: Ահա եւս մէկ «նախադրման», որ մեզ փորձում են դարձադրել տարրական բառախաղով:

Մտնել են կազմում մեր մտահոգութիւնների ընդհանուր օրջագիծը ադրիլից մինչ այժմ: Նախաստորագրուած փաստաթղթերը բարեփոխելու նուազակով, դէտէ է տեսար լուսաբանել հանրութեանը եւ ամէն կերպ դաշտաբել «առանց նախադրմանների» սկզբունքի շուրջ դրամանաւորութեան միակողմանի խախտման դէմ:

<sup>1</sup> Առ ի գիտութիւն ՀՀ դիւանագիտական կորդուսի՝ թարգմանաբար մէջ ենք բերում նշանակալից թուրքական լեզուով թարգմանութիւնը, ըստ հետեւեալի.

1. Վերականգնել դիւանագիտական յարաբերութիւնները երկու երկրների միջեւ:
  2. Յարգել միջազգային իրաւունքներն ու մասնաւոր զեղումները, որոնք կարգաւորում են խաղաղ գոյակցութիւնը եւ բարիդրացիական յարաբերութիւնները երկրների եւ ժողովուրդների միջեւ:
  3. Յարգել երկու երկրների եւ ժողովուրդների ֆաղափական կամքը եւ խուսափել գաղափարախօսութիւնների արտահանման եւ դրանք դարձադրելու ֆաղափականութիւնից:
  4. Խուսափել տարածաշրջանային կամ միջազգային կոնֆերանսներ կազմակերպելուց, որոնք նուազակ ունեն գործադրել այնդիսի ֆաղափականութիւն կամ դարձաբերութիւններ ընդունել եւ սղառնալ հարեւան երկրների ադառնութեանն ու կայունութեանը:
  5. Չզտել խաղաղ ճանադարհով լուծել երկու երկրների միջեւ մնացած տարաձայնութիւնները:
- Հիմնել միացեալ կոմիտէներ ֆննելու երկու երկրների միջեւ դեռեւս անլոյծ մնացած խնդիրները, յասկադէս նրանք, որոնք վերաբերում են ադառնութեանը, եւ իրագործել այս համաձայնութեան կէտերը: <http://www.africa.upenn.edu/Hornet/irin-5499.html>

# **Թուրքիայի ոճը անհարիր է հարաբերություններ հաստատելու հարթությունը**



*«Դրօշակի» հարցերին պատասխանում է ՀՀԴ  
Բյուրոյի անդամ Լևոն Մկրտչյանը*

- Ձեզ չի՞ թվում, որ Հայաստանի և Թուրքիայի հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու խնդիրը, որ նշանաբան ուներ՝ «առանց նախապայմանների», նախաստորագրված արձանագրությունների մեջ վերածվել է «բարիդրացիական հարաբերությունների» հաստատման կամ ձգտման, ինչն արդեն հղի է, թերևս, երկուստեք, նախապայմանների առաջադրմամբ: Չկա հստակ բաժանում փուլերի միջև. նախնական՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատում, սահմանների բացում և արարողակարգային այլ գործառույթներ և հիմնական՝ բարիդրացիական հարաբերությունների հաստատում, որին հասնելու համար վիթխարի աշխատանք և երկարատև ժամանակ է պահանջվում:

Եթե նախնական փուլի համար նախապայմանները մերժելի են, ապա հիմնական փուլի իրագործումն անհնար է պատկերացնել առանց նախապայմանների: Գոնե Հայաստանը

բարիդրացիական հարաբերություններ չի կարող հաստատել Թուրքիայի հետ, քանի դեռ չեն հարթվել երկու երկրների, երկու ժողովուրդների միջև անդունդ գոյացրած հարցերը:

- Այսօր դեռևս կա այն թյուր պատկերացումը, թե ՀՀԴ-ն դեմ է հայ-թուրքական սահմանի բացմանը և հարաբերությունների բնականոնացմանը: Իրականում, սակայն, հենց մեր կուսակցությունն է, որ տարիներ շարունակ միջազգային տարբեր բեմերում պայքարել է Հայաստանի շրջափակումը վերացնելու և Թուրքիայի կողմից սահմանը բացելու համար: Ի՞նչ նպատակով է դա արվել: Պարզ է, որ մեր երկու ժողովուրդներն ապրելու են կողք-կողքի, և սահմանի փակ լինելը, թշնամական հարաբերությունները նրանցից ոչ մեկին օգուտ բերել չեն կարող: Եթե հարաբերությունների բնականոնացումը պետք է ծառայի բարիդրացիական հարաբերություններին, ապա դա նշանակում է, որ Թուրքիան պարտավոր է փոխել իր վերաբերմունքը հայ ժո-



ղովրդի հանդեպ: Սա է կարևորագույն հիմնահարցը: Երբ ՀՀ-ն ժամանակին գնաց մեծ զիջման և ընդունեց Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու իշխանությունների դրույթը, հավատում էր, որ, մի օր, ի վերջո, Թուրքիան պետք է ճանաչի իր մեղքը, իր ոճրագործությունը և փոխհատուցի մեր ժողովրդին: Միայն դրանից հետո կարելի է խոսել բարիդրացիական հարաբերությունների մասին: Այս ճանապարհին առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու հայկական կողմի քայլն արդեն իսկ մեծ զիջում է Թուրքիային, որովհետև մենք ցեղասպանության ենթարկված ժողովուրդ ենք, մենք դրա հետևանքով կորցրել ենք մեր հայրենիքի մեծագույն մասը, կորցրել ենք մեր ժողովրդի որակյալ հատվածը: Այս իրավիճակում նախապայմաններով խոսելու Թուրքիայի ոճր պարզապես անհարիր է հարաբերություններ հաստատելու հարթությանը: Կասեի ավելին՝ նվաստացուցիչ է և դա կարելի է նույնիսկ անգեն աչքով տեսնել առկա արձանագրությունների մի շարք կետերում: Մի երկիր, որ ոչընչացրել է իր հայրենի հողի վրա ապրող ժողովրդին, այսօր նրանից պահանջում է ճանաչել ապօրինի սահմանները՝ կնքված նույնքան ապօրինի Կարսի պայմանագրով, հրաժարվել սեփական պատմությունից և հատկապես Ցեղասպանությունից ու Ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարից, և, ամենակարևորը՝ պարտվողական դիրքորոշում գրավել Արցախի հար-

ցում և զիջել մեծ զոհողությունների գնով ձեռք բերված հաղթանակը: Այս երեք նախապայմանները նշանակում են, որ ի դեմս Թուրքիայի մենք ունենք մեր ազգային անվտանգությանը սպառնացող հարևան: Այս իրավիճակում խոսել բարիդրացիական հարաբերությունների մասին, նշանակում է Հայաստանը ենթարկել լուրջ փորձությունների: Իմ կարծիքով մենք առայժմ կարող ենք խոսել միայն հարաբերությունների բնականոնացման մասին, կարող ենք խոսել այն տեսիլքով, որ դա ի վերջո կնպաստի, որ մի օր Թուրքիան, նրա քաղաքական և մտավոր էլիտան, ժողովրդի մեծամասնությունը ունենան այն ուժը, որ ուղիղ նայեն իրենց պատմությանը, ընդունեն մեղքն ու փոխհատուցեն հայ ժողովրդի կորուստը: Դրանից հետո միայն կարելի կլինի խոսել բարիդրացիական հարաբերությունների հաստատման մասին: Հակառակ պարագայում մենք առիթը կունենանք ականատես լինելու մեր ժողովրդի հաշվին կատարված հերթական անարդար գործարքի: Եթե նույնիսկ այսօր մեր ժողովուրդը մի հրաշքով համակերպվի ստեղծված իրավիճակին, ապա վաղը չլուծված հարցերը կրկին գլուխ են բարձրացնելու: Եթե մենք արդար լուծում ենք ակնկալում, ապա այն պետք է փնտրել Թուրքիայի կողմից ապաշխարանքի ու փոխհատուցման մեջ:

Համեմատության համար եկեք պատկերացնենք, որ նյուրնբերգյան դատավարության ժամանակ որոշեին պատմաբանների հանձնաժողով ստեղծել հրեա և գերմանացի պատմաբաններից, որպեսզի նրանք քննեին և եզրակացություն տային հոլոքոստի լինել-չլինելու մասին: Անտրամաբանական է, այնպես չէ՞: Նույնքան անտրամաբանական է նաև այն պնդումը, թե Ցեղասպանության կրողը, նրա ճանաչման հետապնդողը միայն Սփյուռքն է: Չպետք է մոռանալ, որ ՀՀ բնակչության կեսից ավելին այդ ցեղասպանության արդյունքում է այստեղ հայտնվել: Հայաստանի Հանրապետությունում չկա մի ընտանիք, որի մի ծյուղը գոնե ենթարկված չլինի ցեղասպանության կամ այդ պատճառով զրկանքներ կրած չլինի: Երբ մենք համաձայնում ենք թուրքական նախապայմաններին և գնում ենք քննելու այս իրողությունը, ապա դա վիրավորանք է ոչ միայն զոհերի ու նրանց ժառանգների, այլև նոր աչք բացած սերնդի հասցեին, որովհետև նրանցից յուրաքանչյուրը որբանոցներում մեծացած իր մեծ պապ ու տատից լսել է արդեն մեր ժողովրդին պատուհա-

սած դարասկզբի եղեռնի մասին: Այնպես որ, դեռ շատ վաղ է խոսել բարիդրացիության մասին: Մենք կարող ենք խոսել ընդամենը հարաբերությունների բնականոնացման մասին այն տեսակ-յունից միայն, որ այդ ուղղությամբ կարող էր առաջընթաց համարվել երկու կողմերից առանց նախապայմանների քայլ կատարելը: Փոխարենը մենք տեսնում ենք, որ Թուրքիան ճիգ է թափում այս արձանագրություններում ամրագրել իր նախապայմանները, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ մենք գործ ունենք ոչ անկեղծ հարևանի հետ, մի պետության հետ, որն իր քայլերը կատարում է ճնշումների ազդեցությամբ, կամ միայն սեփական շահերից ելնելով:

**- Սակայն ունենք այն, ինչ ունենք: Ի՞նչ բարեփոխումներ է ակնկալում ՀՀԴ-ն այս արձանագրություններում, ի՞նչ ճանապարհով է փորձելու հասնել այդ փոփոխություններին և ի՞նչ է անելու, եթե այսուհանդերձ, արձանագրությունները մնան անփոփոխ և վերածվեն պաշտոնական փաստաթղթի:**

- Արձանագրություններն ըստ էության, բացառությամբ այն կետերի, որոնք մենք առանձնացրել ենք որպես նախապայմաններ պարունակող, ունեն երկու երկրների միջև հարաբերությունները առանց նախապայմանների կարգավորելու մեծ ծավալ: Սա հստակ է: Եթե հայկական կողմը կարողանա ինչպես հարկն է, մեր առաջարկներին համապատասխան, վերածնակերպել այդ կետերը, ապա այս արձանագրությունները կարող են դառնալ լուրջ քայլ՝ երկու երկրների կողմից հարաբերությունների կարգավորման ճանապարհին: Եթե մենք չենք կարողանում դա անել, եթե Թուրքիան պահանջում է առանց որևէ փոփոխության ստորագրել ու վավերացնել այս արձանագրությունները, ուրեմն մենք կրկին պետք է մտածենք, թե որքանով է այդ երկիրը անկեղծ և որքանով է պատրաստ հարաբերություններ հաստատել դրական ֆոնի վրա: Պետք է նաև մտածենք՝ արդյո՞ք այս արձանագրությունների վերջնական նպատակն այն չէ, որ մեծանա Թուրքիայի դերակատարությունը տարածաշրջանում, և Հայաստանը դարաբաղյան խնդրում հայտնվի ծանրագույն կացության մեջ:

Մենք որոշել ենք ամեն գնով հասնել մեր նախանշած փոփոխություններին՝ ժողովրդական ալիք բարձրացնելու ճանապարհով, նրան հարցի էությունը բացահայտելով, որովհետև պայքարը երկարատև է լինելու, այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիան չի ճանաչել ցեղասպանության

փաստը: Մարդկանց մի խավի մեջ այն թյուր պատկերացումն է իշխում, թե ՀՀԴ-ն հանում մեր անցյալի է սկսել այս պայքարը: Իրականության մեջ մենք դա անում ենք հանում ապագայի, որովհետև Թուրքիան, եթե հաջողեցնի նման պայմանագիր կորզել մի ժողովրդից, նրա մի բեկորից, որին ցեղասպանության է ենթարկել ժամանակին և դրա համար ոչ մի պատասխանատվության չի ենթարկվել, կմնա որպես մշտական սպառնալիք Հայաստանի Հանրապետության համար:

Մենք պետք է ամեն ինչ անենք, որ այս արձանագրությունները, նույնիսկ ստորագրվելուց հետո չվավերացվեն մեր խորհրդարանի կողմից: Աշխատում ենք և կշարունակենք աշխատանքը պատգամավորների հետ, որպեսզի նրանց համար պարզ դառնան արձանագրություններում առկա բոլոր վտանգավոր կետերը: Մեծ հույս ունենք, որ ՀՀ իշխանությունները, հասարակությունը, քաղաքական ուժերը, ի վերջո, կկարողանան անաչառ գնահատական տալ այս փաստաթղթին և հասկանալ, թե նրա մեջ եղած մի քանի ձևակերպումներն ինչպիսի մեծ վտանգ են պարունակում:

**- Այս արձանագրությունների ստորագրման և վավերացման նախօրյակին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հանկարծ դրական կարծիք է արտահայտում նախաստորագրված փաստաթղթերի վերաբերյալ, այն դեպքում, երբ ակադեմիկոսներից շատերը, առանձին-առանձին, լուրջ մտահոգություններ ունեն և հորդորում են իշխանություններին զգուշավորություն ցուցաբերել մեր ժողովրդի հետագա ճակատագրի հետ կապված այս լրջագույն գործընթացում: Ինչպե՞ս հասկանալ մեր գիտնականներին:**

- Դուք, հավանաբար, նկատի ունեք ՀՀ ԳԱԱ տարեկան ամփոփիչ արձանագրությունը, որը հրապարակվեց և որտեղ, այո, դրական կարծիք է արտահայտվել սույն արձանագրությունների վերաբերյալ: Բայց ես տեղյակ եմ, որ քննարկումների ժամանակ իմ նշած բոլոր մտահոգությունները բարձրացվել են: Առաջիկայում մենք կունենանք խորհրդարանական լսումներ, և այս հարցի մեր խոշոր մասնագետները՝ ակադեմիկոսներ, դոկտորներ, իրենց տեսակետը կհայտնեն: Ինքս լինելով պատմաբան՝ կարող եմ ասել, որ պատմաբանները հատկապես լուրջ անելիք ունեն: Պատմությունը որպես գիտություն միշտ

ենթակա է քաղաքական կոնյուկտուրային ազդեցությունների: Այդ ազդեցությունների տակ է, որ պատմությունը խեղաթյուրվում և ծառայեցվում է ինչ-ինչ խնդիրների լուծմանը: Մենք ուղղակի կոչ պետք է անենք մեր մասնագետներին՝ մնալ գիտական բարձունքի վրա: Մեր համոզմամբ՝ անաչառ գիտությունը, ճիշտ գնահատականները, ճիշտ վերլուծությունները պետք են հատկապես քաղաքական գործիչներին՝ այս իրավիճակում կողմնորոշվելու համար: Քաղաքական գործիչը մասնագետ չէ, նա կարիք ունի մասնագետի գնահատականի: Եթե մասնագետը, ով ողջ կյանքում ուսումնասիրել է տվյալ հարցը և դրա արդյունքում հասել գիտության բարձունքներին, սխալ տեղեկանք է տալիս, ապա նրա մեղքը տասնապատիկ ավելի մեծ է, քան քաղաքական գործիչինը, ով քայլեր է ձեռնարկում այդ տեղեկանքի համեմատ: Սա, վստահ եմ, գիտակցում են մեր բոլոր գիտնականները: Հետևաբար, եթե գիտական աշխարհում և մեր ժողովրդին հայտնի մեծանուն մասնագետները գտնում են, որ այս արձանագրություններն իրոք արժանի չեն վավերացման, ապա այդ մասին թող ի լուր հանրության խոսեն խորհրդարանի ամբիոնից: Կարող եք հավատացած լինել, որ դա լուրջ ներդրում կլինի նաև պետականության անրապնդման գործընթացում:

**- Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը վերջերս բարձրաձայնեց այն մասին, որ հայկական սփյուռքն, իբր, խոչընդոտում է հայ-թուրքական հարաբերությունների առաջընթացին: Կարծես նրա խոսքերին ի հետևանք, հայկական բազում լրատվամիջոցներ, այդ թվում նաև Հանրային հեռուստատեսությունը, հարկ չհամարեցին անդրադառնալ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի կոչին՝ ուղղված ՀՀ իշխանություններին՝ զերծ մնալ վտանգավոր քայլերից: Տպավորությունն այնպիսին է, ասես մեր իշխանություններն սկսել են ընդգրծված հարգանքով վերաբերվել Թուրքիայի ղեկավարների տեսակետներին:**

- Այդ հարցին ես այսպես կպատասխանեմ. հայ ժողովրդի համար ամենավտանգավոր հետևանքը կարող է լինել այն, որ այս գործընթացը ձգձգվի և այդ ընթացքում Սփյուռքի և Հայրենիքի միջև վիճելու ել ճեղքվածք առաջանա: Մեզ համար ծանրագույն հարված կլինի, եթե Սփյուռքում գերիշխող դառնա այն մտայնությունը, որ Ցեղասպանության, պահանջատիրության կրողը և պատասխանատուն միայն Սփյուռքն է, իսկ Հայաս-

տանի Հանրապետությունն այդ ամենի հետ գործ չունի և այդ արժեքներին տեր չի կանգնում: Դա կբերի անդառնալի կորուստների: Ի վերջո թուրքական պետությունը, Խորհրդային Միության ժամանակներից սկսած, ամենաշատը վախեցել է հայ ժողովրդի հավաքական ներուժից: Նորօրյա Հայաստանի անկախության առաջին տարիներին, ցավոք սրտի, մեր իշխանությունները մի քանի անգույշ արտահայտություններով ու քայլերով սասանեցին հայրենիք-սփյուռք հարաբերությունները: 1998-ից այս կողմ աստիճանաբար ձևավորվել ու ամրապնդվել է մեր պատկերացրած հավաքական կամքը, ներուժը, որը նախ և առաջ խարսխված է Ցեղասպանության եւ պահանջատիրության պայքարի հիմքին: Այս գործընթացի ձգձգումն ու մեր տարօրինակ կեցվածքն այսօր սպառնում են օժանդակել թուրքական քարոզչամեքենայի աշխատանքին: Կրկնում եմ՝ ոչ մի բանից այնքան շատ չի վախենում Թուրքիան, որքան աշխարհով մեկ սփռված հայության՝ մեկ կետի հարվածելու ունակությունից ու կամքից: Այնպես որ, մենք պարտավոր ենք բոլորս միասին չեզոքացնել հայության միասնականությանը սպառնացող յուրաքանչյուր քայլ: Հայ Ցեղափոխական Դաշնակցությունն ամեն ինչ անելու է, որպեսզի Սփյուռքը հասկանա, որ Հայաստանում հարյուր հազարավոր մարդիկ տեր են մեր ժողովրդի պահանջատիրությանը, և որպեսզի Հայաստանում գիտակցեն, որ Սփյուռքում հարյուր հազարավոր մարդիկ տեր են Հայաստանի անկախության անրապնդման, պետականության հզորացման ու անվտանգության երաշխիքների ձևավորման, Արցախի հարցի լիարժեք լուծման և հաղթական ավարտի գործընթացներին: Հակառակ պարագայում մենք կդառնանք անապագա ժողովուրդ: Մենք մեծ հարգանքով պետք է վերաբերվենք առաջին հերթին մեր հանդեպ ցուցաբերված անարդարությունների ճշգրիտ գնահատման անհրաժեշտությանը և մեկ անգամ ևս չեշտենք, որ հայ ժողովուրդը պատրաստ է այդ անարդարությունների հետևանքների վերացման համար շատ մեծ գին վճարել: Թերևս այս մտահոգությամբ ՀՀ-ի խընքակցությունը մեր խորհրդարանում շրջանառության մեջ դրեց ուրացման համար դատապարտման օրենքի նախագիծը: Այդ օրենքի ընդունումը, կարծում եմ, կարող է կանխարգելել նման փաստաթղթերի լույս աշխարհ գալը:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՖԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 2

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԳՆԱԺԱՄԻ  
ԴԱՍԵՐԸ

Արա Նռանյան

Ընդամենը երկու տարի առաջ, երբ գրեցի «Տնտեսական միֆեր և իրական տնտեսություն» հոդվածը<sup>1</sup>, դժվար էր պատկերացնել, որ ժամանակակից պահպանողականների և նեոլիբերալների կողմից մշտապես քարոզվող, տարբեր հասարակություններում տարածվող միֆերի քննադատական հոդվածում բերված հիմնավորումները կստանան այնպիսի լուրջ փաստարկներ, որ այլևս ավելորդ է հիմնավորել նման միֆերի ձախողվածության ու անընդունելի լինելու հանգամանքը: Այդ փաստարկները մեզ տվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի դասերը նախ և առաջ պետք

է քաղեն նրանք, ովքեր տարիներ շարունակ ղեկավարում էին երկիրը՝ առաջնորդվելով կեղծ ազատական գաղափարներով և նեոլիբերալ դոգմաներով: Հասարակության մեջ տարածված և սերմանված այդ միֆերը թույլ չտվեցին մեզ կառուցել ազգային տնտեսություն բոլորովին այլ արժեքային համակարգով...

Ստորև անդրադառնանք այն մի քանի միֆերին, որոնց մասին խոսք էր գնում առաջին հոդվածում: Դրանք վերջնականապես պայթեցին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի շնորհիվ:

Ամենահզոր՝ «Պեղծությունը վար կառավարիչ է» միֆին արդեն անդրադարձել էինք: Եվ ճգնաժամը մեզ հնարավորություն տվեց վերջնականապես խաչ քաշել այս թեզի վրա: Տնտեսության անկման հետևանքով փլուզվեցին

հզոր և կարծես թե անդրդվելի մասնավոր ֆինանսական կառույցներ: «Լավագույն» կառավարիչների (մենեջերների), հաջողակ օլիգարխների կայսրությունները հայտնվեցին փլուզման եզրին: Եվ միայն պետության արագ և մեծ ֆինանսական ներարկումը թույլ տվեց փրկել մասնավոր օլիգարխիկ կապիտալը վերջնական կործանումից: ԱՄՆ և Ռուսաստան, Եվրոմիություն և Ճապոնիա... Նույնիսկ՝ Հայաստան: Կառավարությունների արագ արձագանքման շնորհիվ հաջողվեց կանգնեցնել հազարավոր աշխատատեղեր և կարևորագույն ենթակառույցների գործունեությունն ապահովող տնտեսավարողների ջախջախումը: Պետությունը նույնիսկ գնաց աննախադեպ քայլի՝ սեփական

1 «Դրոշակ», թիվ 6, 2007 թ.:



միջոցներով մասնակցեց «ճգնաժամային» մի շարք ընկերությունների կապիտալին: Ավելին՝ պետության մասնակցությունը և միջա-մտությունը դարձավ այդ ընկերությունների մենեջմենթի համար ցանկալի և լավագույն ելքը:

Եվ ընդհակառակը՝ աշխարհին հայտնի չեղավ շատ թեքիչ պետական վերահսկողության տակ գտնվող համակարգերի ցածր դիմադրողականության մասին: Նրանք, անշուշտ, ունեցան դժվարություններ, սակայն չհանդիսացան ճգնաժամի առաջացման կամ խորացման պատճառ:

Հենց այսօր մի շարք երկրներում պետությունը գնում

է այն տարբերակով, որը քննադատվում էր նեոլիբերալների կողմից. ազգայնացվում են վնասաբեր ընկերությունները, իրականացվում են առողջացման ծրագրեր, որոնց դրական արդյունքի պարագայում պետական բաժնեմասը կրկին կմասնավորեցվի:

Հիշո՞ւմ եք բուռն պայքարը հանուն պետական բյուջեի դեֆիցիտի նվազեցման: Բյուջեի նվազեցումը դարձել էր ինքնանպատակ և դիտվում էր որպես մակրոտնտեսական կայունության պարտադիր գրավական: Հայաստանը իր «բարձր վարկանիշով» դարձել էր ավելի «կայունասեր», քան բազմաթիվ զարգացած պետություններ: Նույնիսկ մեկ տոկոսով դեֆիցիտի ցուցանիշի բարձրացումը դիտվում էր վտանգավոր: Այնինչ այսօր ԱՄՆ-ը գնում է ՀՆԱ-ի 10 տոկոսից բարձր բյուջետային դեֆիցիտի<sup>2</sup>, իսկ ՀՀ կառավարությունը ստիպված էր առաջարկել Ազգային ժողովին ավելացնել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով թույլատրելի սահմանը մինչև 7 տոկոս:

Դոտացիայի կամ պետական աջակցության անթույլատրելիության մասին միֆը ամբողջությամբ օտարել էր մեր պետությունը

տնտեսական խնդիրներից: Պետությունը տարանջատվել էր տնտեսության իրական հոգսերից: Իսկ այսօր պետական աջակցության տարբեր եղանակների կիրառումը համարվում է ճգնաժամի հաղթահարման առաջին միջոցառումներից մեկը: ԱՄՆ-ն աննախադեպ ծավալի գումարներ է ուղղում հակաճգնաժամային միջոցառումների և ուղղակի կամ անուղղակի աջակցության համար<sup>3</sup>: Հայաստանը գերծ չմնաց այդ քայլերից: Առաջիններից օժանդակություն ստացան հաջողակ համարվող հանքարդյունաբերության ընկերությունները, որոնք լավագույն պայմաններով տիրացան ազգային հարստությանը, վայելեցին իրենց արտադրանքի գների բազմապատիկ աճը միջազգային շուկայում և գերշահույթները, իսկ այսօր սպառնում են աշխատատեղերի կրճատմամբ<sup>4</sup>: Տնտեսությանը հատկացվող օգնության ծավալը ԱՄՆ-ում գերազանցում է ՀՆԱ-ի 10 տոկոսը<sup>5</sup>, Եվրոպայում՝ ՀՆԱ-ի 13 տոկոսը: Հայաստանն արդեն ձեռք է բերել պայմանավորվածություն ավե-


<sup>2</sup> Այն ամենայն հավանականությամբ կլինի 13 տոկոսի չափով:  
<sup>3</sup> Բուշի օրոք հատկացվեց 703 մլրդ. ԱՄՆ դոլար, Օբամայի օրոք՝ ևս 800 մլրդ.:  
<sup>4</sup> Ինքնին առանձին քննարկման արժանի է հանքերի մասնավորեցման նպատակահարմարության հարցը:  
<sup>5</sup> Ընդ որում՝ ԱՄՆ-ն օգնությունը տրամադրում է Դաշնային ռեզերվային համակարգի բանկերի միջոցով, այնինչ Հայաստանը գումարների հատկացումը կատարում է առևտրային բանկերի միջոցով, որի պատճառով այս ճգնաժամի պայմաններում լրացուցիչ հարստացման առիթ է ձևավորվում բանկերի համար, իսկ միջոցները դադարում են մատչելի լինել տնտեսությանը:

լի քան 1,5 մլրդ. ԱՄՆ դոլար լրացուցիչ արտաքին միջոցներ ներգրավելու համար, ինչը գերազանցում է մեր ՀՆԱ-ի 15 տոկոսը:


Օտարերկրյա ներդրումների մոլուցքը նաև առաջացրեց կախվածություն այդ ներդրումներից: Գնաժամի արդյունքում բոլոր զարգացող երկրներից հայրենիք փախած ներդրումները իրենց հերթին հանդիսացան երրորդ աշխարհի երկրներում արտադրության ծավալների նվազման, աշխատատեղերի կրճատման և տնտեսական անկման պատճառ:

Գնաժամը ապացուցեց, որ ազատ շուկան և մրցակցությունը բոլորովին էլ ի վիճակի չեն ամբողջությամբ կարգավորել շուկան, և առանց պետական միջամտության շուկայում առաջացող դեֆորմացիաները ոչ միայն կարող են խոչընդոտել տնտեսական զարգացմանը, այլև պատճառել այնպիսի խորքային ավերածություններ, ինչպիսին առաջացրեց համաշխարհային ճգնաժամը:

Հայաստանում պայթեց նաև արմատացած ամենամեծ միֆը՝ տնտեսական աճը բոլորովին էլ չլուծեց մեր խնդիրները: Տարիներ շարունակ երկնիչ տնտեսական աճ և լավագույն մակրոտնտեսական ցուցանիշներ ունեցող Հայաստանը ունեցավ ամենամեծ անկումը: ՀՆԱ-ի «անորակ» աճը չստեղծեց երկարատև զարգացման նախադրյալներ: Ան-



## Նեոլիթերալիզմ՝



կում ապրեցին բոլոր այն ճյուղերը, որոնց վրա մենք դրել էինք մեր հույսը՝ հանքարդյունաբերությունը, շինարարությունը, սպասարկման ոլորտը: Մենք հայտնվեցինք այն դիրքում, որում գտնվում էինք մի քանի տարի առաջ: Իսկ այսօր արդյունաբերական քաղաքականություն և որոշակի պրոտեկցիոնիստական քայլեր են իրականացնում բոլոր երկրները, այդ թվում նրանք, ովքեր տալիս էին մյուսներին (նաև՝ մեզ) ազատ

շուկայական հարաբերությունների դասեր:

Տնտեսական աճի խրախուսման և տնտեսական աճի բարձր ցուցանիշ ներկայացնելու և, ինչու չէ, նաև սեփական գրպանը հեշտությամբ լցնելու համար փաստացի խրախուսված ներմուծումը նետեց մեզ այնպիսի մի անդունդ, որից դուրս չենք կարող գալ ոչ «լողացող» կուրսով, ոչ էլ Հայաստանում հանգստա-



նալու շատ վիճահարույց կոչով: Առաջացած դոլարային զանգվածի դեֆիցիտը, փաստացի բացակայող արտահանման պայմաններում, հաջողվեց մեղմել բացառապես միայն արտաքին ներարկումների շնորհիվ:

Այս խնդիրների մասին նշել էինք մինչև ճգնաժամը, այդ թվում՝ նաև հիշատակվող «Տնտեսական միջերևույթի և իրական տնտեսություն» հոդվածում: Այսօր ունենք մեր իրավացիությունը փաստող լավագույն ապացույցը՝ ի դեմս ահագնացող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի:

Ճգնաժամը տվեց նաև բազմաթիվ այլ դասեր: Այսպես՝ այսօր գովաբանվող և բացարձակ արժեք դարձած շուկայական հարաբերու-

թյունները ցույց տվեցին իրենց կտրվածությունը իրական տնտեսությունից: Տարբեր երկրների տարադրամների միջև մշտապես տատանվող փոխարժեքները լուրջ վնասներ էին հասցնում այդ պետությունների արտաքին տնտեսական հարաբերությունների մասնակիցներին: Ընդ որում, ժամանակը ապացուցեց, որ նման տատանումների և փոփոխությունների համար որևէ տնտեսական հիմնավորում և նախադրյալ չկա: Տարբեր ասեկոսների, կեղծ կամ ոչ նշանակալից տեղեկատվության հիման վրա, բորսայական տատանումները փոխում են տարադրամների հարաբերակցությունը, ինչը մեծ վնասներ է հասցնում արտահանման-ներմուծման զբաղվող ընկերություններին, այնինչ երկրներում ընթացող տնտեսական գործընթացները, տնտեսական աճի

միտումները նման զարգացման որևէ հիմք չեն տալիս:

Նույնը վերաբերում է բաժնետոմսերի առքուվաճառքին: Այսօր ակնհաս է ենք լինում, թե ինչպես է մի փոքր՝ հաճախ ոչ էական կամ հեշտ լուծվող խնդիրների ունեցող ընկերությունների բաժնետոմսերի գինն անկում ապրում մի քանի անգամ, այնինչ այդ ընկերության իրական արժեքը ավելի բարձր է, իսկ տնտեսական վիճակն ավելի բարվոք, քան կայուն բորսայական ցուցանիշներ դրսևորող տնտեսվարողներին: Արդյունքում ընկերությունների արժեքը կարող է մի քանի անգամ ավելի էժան լինել, քան նրանց ակտիվները: Այս պայմաններում դժվարանում են տվյալ ընկերության՝ կապիտալ ներգրավելու հնարավորությունները, և ի վերջո լրիվ կենսունակ և առողջ ընկերությունը դատապարտվում է աստիճանական անկման:

Բորսային առևտուրը կտրվել էր տնտեսական իրականությունից: Սովորական երևույթ էր, երբ ֆյուչերսային գործարքների ընդհանուր ծավալը գերազանցում էր տվյալ ապրանքի արտադրության, արդյունահանման և իրացման հնարավոր իրական ծավալները: Այդ առևտուրը ուներ միայն մեկ նպատակ՝ սպեկուլյատիվ ճանապարհով շահույթների ստացում գոյություն չունեցող հումքի կամ ապրանքի բազմակի

զնման-վաճառքի միջոցով:

Առանձին խնդիր է վարկանիշային ընկերությունների գործունեությունը, որոնք իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան ճգնաժամի առաջացման գործում: Մենք նույնպես հպարտանում էինք մեզ տրված բարձր վարկանիշերով և Հայաստանի տնտեսական քաղաքականության գնահատականներով, տարված էինք մեզ գովաբանելով, իսկ այսօր վայելում ենք տարածաշրջանում ամենամեծ տնտեսական անկումը: Չմոռանանք, որ բոլոր այն ընկերությունները, որոնք պայթեցին ճգնաժամի հետևանքով, ունեին բարձր «վարկանիշեր»<sup>6</sup>:

Եթե նախորդ հոդվածում մենք փաստել էինք այս միջերի գոյությունը, իսկ մասամբ հաղթահարված էինք համարում առայժմ միայն ստվերի «թույլատրելիության» և մենաշնորհների գոյության օրի-

նաչափության, ինչպես նաև օլիգարխների «շնորհաշատության» մասին միջերը, ապա ճգնաժամը տնտեսագիտական մտքին հնարավորություն է տալիս ազատվել բոլոր կեղծ կապանքներից, կաշկանդող թեզերից, իսկ հասարակությանը՝ իր իրական բարեկեցության խոչընդոտներից: Քանզի բոլոր միջերը և այսուհետ բոլորս կարող ենք ազատ և առանց նախապաշարմունքների քննարկել թե մեր տնտեսական կյանքը, թե մեր տնտեսական քաղաքականությունը:

### *Վերջաբանի փոխարեն*

Խորհրդային տարիներին տնտեսությունը չէր ենթարկվում բնական տնտեսական օրենքներին, քանի որ գաղափարախոսությունը հաճախ պահանջում էր այնպիսի քայլերի իրականացում, որոնք բոլորովին չէին նպաստում տնտեսության արդյունավետու-

թյան ու մրցունակության բարձրացմանը: Բոլշևիկները կառուցում էին մի հասարակարգ, որտեղ ամեն ինչ գաղափարականացված էր, այդ թվում՝ տնտեսությունը:

Այսօր մենք ականատես ենք նեոլիբերալ-բոլշևիզմի: Նեոլիբերալները կառուցում են նեոլիբերալիզմ, որտեղ առաջնայինը ոչ թե տնտեսության իրական պահանջներն են, այլ՝ նեոլիբերալ գաղափարախոսության դոգմաները: Վերջում փոքրիկ մեջբերում ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների<sup>7</sup> իրականացման մասին ամփոփ հաշվետվության վերջաբանից.

*«Կառավարությունը հավատարիմ կմնա իր որդեգրած ազատական արժեքային քաղաքականության սկզբունքներին և ԱՀԿ և այլ միջազգային կառույցների առջև ստանձնած պարտավորություններին: Տնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած քաղաքականության որոշակի ճշգրտման անհրաժեշտությունը ոչ մի դեպքում չի հանդիսանա ազատական քաղաքականության ուղուց շեղվելու պայման»:*

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է սա գրված, ո՞ւմ համար և, ամենակարևորը, արդյո՞ք որևէ մեկին այսօր, այս ճգնաժամի պայմաններում, նման խոստումը հետաքրքրում է:

<sup>6</sup> Միջազգային ֆինանսական կառույցները մշտապես բարձր են գնահատել Հայաստանի տնտեսական վիճակը և կառավարության բարեփոխումները, իսկ այսօր մենք կանգնած ենք կորցրած տարիների փաստի և տնտեսական կառուցվածքի տխուր պատկերի առջև: Եվ այսքանից հետո տարբեր միջազգային կառույցներ, օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, քննադատում է նախ և առաջ զարգացող երկրներին, որոնք իրենց երկրում կառուցում են ազգային տնտեսություն՝ չցանկանալով ծառայել կայացած և զարգացած տնտեսություններին:

<sup>7</sup> Թեև կառավարությունը հայտարարում է ընդհանուր հոսանքով շարժվելու ռազմավարության մասին, սակայն չի կիրառում բոլոր այն միջոցառումները, որոնց ականատես ենք լինում այլ երկրներում: Ակնհայտ է, որ «աջակցություն-ազգայնացում-հարկերի իջեցում-լայնածավալ օգնություն բնակչությանը» շարքում ունենք լրջագույն բացեր: Իսկ այն, որ իրականում դրանք նախկինում ծրագրված միջոցառումներն են, և այնտեղ բացակայում է որևէ իրական հակաճգնաժամային քաղաքականություն, լավագույնս հաստատում են փաստացի դատարկ «Իրական հատված» և «Արտաքին տնտեսական քաղաքականություն» բաժինները...

## Ազատագրված տարածքների պատմական նշանակության հարցի շուրջ

Հրանտ ԱԲՐԱՅԱՆ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Գուրգեն ԳԵՂԱՄՅԱՆ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր



**Ք**ուռ և Արաքս գետերի արանքում գտնվող Արցախ-Ղարաբաղը, ավելի քան 13 հազար վերստ տարածքով<sup>1</sup>, դարերի ընթացքում ենթարկվել է հարձակումների, գազանաբար հողտվել և յուրացվել է օտարի կողմից: Արդեն խորհրդային տարիներին մնացած ընդամենը 4,4 հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա 1923 թ. կազմվել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Խորհրդային տարիներին մարզը թողարկում էր Ադրբեջանի արդյունաբերական արտադրանքի 1,8 և գյուղատնտեսական մթերքների 3 տոկոսը: Եթե 1926 թ. մարզի բնակչությունը կազմում էր Ադրբեջանական ԽՍՀ ընդհանուր բնակչության 5,4 տոկոսը, ապա 1989 թվականի մարդահամարի տվյալներով այն իջել էր 2,7 տոկոսի<sup>2</sup>: Նույն ժամանակաշրջանում, եթե հանրապետությունում թուրք-ազերիների աճել կազմել է 484 տոկոս, ապա Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հայերի թիվը աճը է ընդամենը 102,8 տոկոս<sup>3</sup>:

Այդպիսին էր Լեռնային Ղարաբաղի վիճակը, երբ գորբաչովյան վերակառուցման տարիներին


բարձրացավ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը: 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած ԼՂ ինքնավար մարզի մարզային խորհրդի 20-րդ գումարման 4-րդ արտահերթ նստաշրջանը, արտահայտելով մարզի բնակչության պահանջը, որոշեց հարց հարուցել վերադաս մարմինների առաջ՝ մարզը դուրս բերել Խորհրդային Ադրբեջանի կազմից և վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ<sup>4</sup>: Ադրբեջանը ոչ միայն անբարոյականորեն մերժեց ԼՂ մարզային խորհրդի խնդրանքը, այլև 1991-ի

<sup>1</sup> Обзорение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, финансовом отношениях, ч. 3, СПб, 1836, ст. 285, 301, 307.

<sup>2</sup> Խոջաբեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 67:

<sup>3</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарий, т. I, Москва, 2008, ст. 659, 660.

<sup>4</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 21.02.1988:




## Nagorno Karabakh Republic, Artsakh

վերջին և 1992-ի սկզբին բացահայտ պատերազմ սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ: Նա մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա և այլ բնույթի օժանդակություն ստանալով Խորհրդային Միության 4-րդ բանակի կողմից, վայրենաբար ավերում էր երկրամասը: Հազարավոր մարդիկ զոհ գնացին և մարզի բնակչության մի զգալի մասը դարձան փախստականներ ու գաղթականներ: Արցախյան պատերազմում զոհ գնացին շուրջ 6500 հայորդիներ<sup>5</sup>: Հետագայում պատերազմական գործողությունների ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ), օգտագործելով իր բոլոր հնարավորությունները, կարողացավ հակառակորդին ոչ միայն դուրս մղել գրավված տարածքներից, այլև ազատագրել պատմական Արցախի ամբողջ տարածքի մի մասը և վերցնել ԼՂՀ

պաշտպանական ուժերի հսկողության տակ: Ազատագրված հենց այդ տարածքներն էլ այսօր դարձել են վիճաբանության հարց: Թե Ադրբեջանը և թե նրա կնքահայր թուրքիան պահանջում են ազատագրված տարածքներն Ադրբեջանին վերադարձնել առանց որևէ փոխհատուցման: Մինչդեռ այդ տարածքները ռազմատնտեսական և պաշտպանական մեծ նշանակություն ունեն Արցախի հանրապետության համար:

Ակնհայտ է, որ Ադրբեջանի կողմից սկսված Ղարաբաղյան պատերազմի հետևանքով ԼՂՀ պաշտպանական բանակը ստիպված է եղել լիովին կամ մասամբ ազատագրել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը շրջափակող Ադրբեջանի 7 շրջան: Այսօր Ադրբեջանը աշխարհով մեկ աղաղակում է, թե Հայաստանը գրավել է հանրապետության տարածքի 20 տոկոսը, այսինքն՝ 8,78 հազար քառակուսի կիլոմետր տարածք, որի հետևանքով իբրև գոյացել է մեկ միլիոն փախստական: Մինչդեռ իրականում ԼՂՀ ՊԲ հսկողության տակ գտնվում է Ադրբեջանի հան-

<sup>5</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 701-862:



րապետության տարածքի ոչ թե 20, այլ 8 տոկոսը: ԼՂՀ նախագահի պաշտոնակատար Լեոնարդ Պետրոսյանի կողմից 1997 թ. օգոստոսի 17-ին ՄԱԿ Գլխավոր վեհաժողովի նախագահ Քոֆի Անանին ուղարկված նամակում նշված է, որ ԼՂ ՊԲ ռազմական գործողությունների ժամանակ լրիվ ազատագրվել է 5 շրջան (Լաչինի, Քելբաջարի, Ղուբաթլուի, Ջերբայիլի և Ջանգելանի), իսկ Ֆիզուլու և Աղդամի շրջաններն ազատագրվել են մասնակիորեն, ընդամենը 30 տոկոսով:

Ըստ Ադրբեջանի տվյալների, նշված շրջանների տարածքն ու բնակչությունը կազմել են.

Քելբաջար	1936 քառ. կմ, 50,6 հազ. մարդ
Լաչին	1835 քառ. կմ, 59,9 հազ. մարդ
Ղուբաթլու	802 քառ. կմ, 30,3 հազ. մարդ
Ջերբայիլ	1050 քառ. կմ, 51,6 հազ. մարդ
Ջանգելան	707 քառ. կմ, 39,9 հազ. մարդ
Աղդամ	1094 քառ. կմ, 158 հազ. մարդ
Ֆիզուլի	1386 քառ. կմ, 100 հազ. մարդ

Առաջին հինգ շրջանների ընդհանուր տարածությունը կազմել է 6330 քառ. կմ, իսկ Աղդամի և

Ֆիզուլու ընդհանուր տարածությունը՝ 2480 քառ. կմ, սակայն դրանից ԼՂՀ ՊԲ-ի հսկողության տակ է գտնվում Աղդամի տարածքի 35, Ֆիզուլու տարածքի 25 տոկոսը, այսինքն՝ 383 և 347 քառ. կմ: Այսպիսով ԼՂՀ ՊԲ-ի հսկողության տակ գտնվող տարածքը կազմում է ոչ թե 8780 քառ. կմ, այլ 7059, որը հանդիսանում է Ադրբեջանի ընդհանուր տարածքի 8 տոկոսը, այսինքն 2,5 անգամ պակաս 20 տոկոսից, ինչի մասին անընդհատ աղաղակում են Ադրբեջանի ղեկավարներն ու ներկայացուցիչները՝ նպատակ ունենալով շփոթության մեջ գցել միջազգային հանրությանն ու համաշխարհային հասարակական կարծիքը, սակայն չնշելով, որ այդ նույն Ադրբեջանի տիրապետության տակ է գտնվում ԼՂՀ տարածքի 15 տոկոսը<sup>6</sup>:

Մինչև Արցախյան շարժումը Լեռնային Ղարաբաղը գտնվում էր անկլավային վիճակում, այսինքն կտրված էր Մայր Հայաստանից: Արցախի ազատագրական պայքարի տարիներին կենսական պահանջ էր դուրս գալ այդ վիճակից և Հայաստանի հետ ունենալ տարածքային կապ: Ակնհայտ է, որ դեռևս 1920-ական թվականների սկզբին, երբ Ադրբեջանը ստեղծել էր Կարմիր Քուրդիստան, խոչընդոտվել էր Արցախի ցամաքային կապը Հայաստանի հետ: Հետագայում Քուրդիստանը մասնատվեց առանձին շրջանների, որտեղ Ղարաբաղյան ազատագրական պայքարի տարիներին տեղակայվեցին հարյուրավոր կրակակետեր: Քելբաջարի, Լաչինի, Ջերբայիլի, Ղուբաթլուի, Ֆիզուլու և Ջանգելանի՝ այդ վեց շրջանների, որոնք պատմականորեն եղել են Արցախի տարածք, ազատագրումը և այդ շրջաններում տեղակայված կրակակետերի ոչնչացումը բացարձակապես ունեցել է ռազմավարական նշանակություն: Սկզբնական շրջանում խիստ կարևոր էր Լաչինի և Քելբաջարի շրջանների ազատագրումը: Քելբաջարի (Քարվաճառի) և Ղուբաթլուի կողմից Լաչինի (Բերձոր) միջանցքի ուղղությամբ անընդհատ կրկնվող հարձակումների հետևանքով բազմիցս խախտվել է Արցախ-

<sup>6</sup> Арсен Мелик-Шахназаров, Нагорный Карабах.

Факты против лжи. Москва, 2009, ст. 764.


Հայաստան ցամաքային կապը: Փաստորեն՝ վտանգի տակ էր ոչ միայն ցամաքային միջանցքը, այլև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուն գոյությունը: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ուժերին նախ և առաջ հարկավոր էր ետ շարտել հակառակորդին, վերահսկողության տակ վերցնել Քելբաջար-Խանլար ճանապարհին ու վերացնել բոլոր այն կրակակետերը, որտեղից հրետակոծվում էին Արցախի Մարտակերտի և Հայաստանի Վարդենիսի շրջանների բազմաթիվ բնակավայրեր: Մյուս կողմից էլ՝ հակառակորդին զրկել հյուսիսային, այսինքն՝ Քելբաջարի կողմից Լաչինի միջանցքի ուղղությամբ ռազմական գործողություններ ձեռնարկելուց: Հակառակորդը հարավի՝ Ղուբաթլուի կողմից անընդհատ հարձակումներ էր գործում Լաչինի միջանցքի ուղղությամբ: Դա կանխելու և այդ կողմերի հակառակորդի բոլոր կրակակետերի ոչնչացումը, ինչպես նաև հակառակորդին դեպի հարավի կողմը հեռացնելու համար Ղուբաթլուի շրջանի ազատագրումը նույնպես դարձել էր հույժ կարևոր ու անհետաձգելի խնդիր: ԼՂՀ ՊԲ-ն այդ հարցը լուծեց պատվով: Ահա թե ինչու Ադրբեջանն իրեն գոհի տեղ է դնում և աշխարհով մեկ աղաղակում Քելբաջար-Լաչին-Ղուբաթլու և մյուս տարածքներից զրկվելու առթիվ: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի խորհրդական Վաֆա Գուլիզադեն 1993 թ. մայիսի 31-ին ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի դեսպաններին, ինչպես նաև ՄԱԿ-ի ներկայացուցչին տեղեկացնելով Քելբաջարի շրջանի ծայրաստիճան լարված իրադրության մասին, հաղորդել է, թե իբրև այնտեղ շրջապատման մեջ են հայտնվել մոտ 60 հազար խաղաղ բնակիչներ<sup>7</sup>: Մինչդեռ, իրականում, արդեն երրորդ տարին էր, ինչ Քելբաջարի շրջանում խաղաղ բնակիչ գրեթե չկար: Նաև հայտնի էր, որ ՊՈԼ Գոբլի ծրագրով ենթադրվում էր Քելբաջարի շրջանը կցել Հայաստանի Հանրապետությանը: Այսպիսով՝ ԼՂՀ պաշտպանական ուժերին խիստ անհրաժեշտ էր Քելբաջարի ազատագրումը և Լաչինի միջանցքի պաշտպանության ապահովումը: Դա նշանակում էր՝ Քելբաջարի շրջանն ազատագրելուց հետո Արցախի պաշտ-



պանական ուժերը պետք է շարժվեին դեպի հարավ՝ Լաչինի ուղղությամբ, միևնույն ժամանակ Լաչինից պետք է շարժվեին Քելբաջարի ուղղությամբ, ու երկու ուժերը միանային: Որ Քելբաջարի ազատագրումը ռազմական տեսակետից ամենաճիշտ և մտածված քայլն էր, այդ է վկայում ՀՀ ռազմական նախարար Վազգեն Մանուկյանի 1993 թ. ապրիլի 3-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ արած հայտարարությունը: Ըստ նախարարի՝ չգրավել Քելբաջարը նշանակում է վտանգի տակ դնել Ղարաբաղի գոյությունը: Այդ ժամանակ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և նրա համախոհները բավականին ջանքեր գործադրեցին Քելբաջարի շրջանը հակառակորդին ետ վերադարձնելու համար: Սակայն նրանց այդ քայլերը պսակվեցին անհաջողությամբ:

Ինչ վերաբերում է մյուս ուղղություններով ԼՂՀ ՊԲ-ի ձեռք բերած հաջողություններին, ապա դրանք ևս խիստ կենսական և ռազմավարական նշանակություն ունեին: Վերցնենք Աղդամը. գտնվելով աշխարհագրական հարմար դիրքում ու երկաթգծի վրա, Աղդամը հնարավորություն ուներ արագորեն կուտակել մեծ թվով ռազմաուժ և դա օգտագործել ԼՂՀ դեմ անընդհատ կրակի

<sup>7</sup> «Ազգ», 2.04.1993:



տակ պահելով Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը, ինչպես և տասնյակ բնակավայրեր: Ազատագրել Աղդամը, նշանակում էր ապահովել ԼՂՀ արևելյան կողմի բոլոր բնակավայրերը և Ստեփանակերտը պաշտպանել հեռահար հրետակոծությունից: Ահա թե ինչու Աղդամի ազատագրումը և այնտեղի կրակակետերի ոչնչացումը ունեին ռազմավարական և պաշտպանական կարևոր նշանակություն: Իսկ այն կարծիքը, թե իբրև Աղդամը հայկական տարածք չի եղել, ամբողջովին սնանկ է: Նախահեղափոխական ժամանակաշրջանում, երբ Աղդամում մոտ 700 մարդ էր ապրում, բնակավայրը և նրա շուրջ փռված տարածքները պատկանել են խմիչքներ արտադրող արցախցի կապիտալիստներին: Բացի այդ, չէ՞ որ Աղդամը պատմականորեն գտնվել է Առանշահիկ թագավորության սահմաններում:

Հայկական զորամասերը երբեք էլ նպատակ չեն ունեցել Աղբեջանից տարածքներ գրավել: Նրանք միայն ազատագրել են այն տարածքները, որոնք խիստ վտանգ էին ներկայացնում ԼՂՀ գոյությանը: Օրինակ Ֆիզուլին, որն անցյալում գտնվել է Արցախի Պիանք գավառում, այնպիսի աշխարհագրական և ռազմավարական հարմար դիրքում է, որտեղի կրակակետերից անընդհատ հրետակոծվում էին ԼՂՀ Հադրութի և Մարտունու շրջանների բնակավայրերը, առաջ բերում մարդկային զոհեր ու նյութական մեծ վնասներ: Սակայն, առանց Ջեբրայիլի շրջանի կրակակետերի ոչնչացման, Ֆիզուլու և նրա շրջակա բնակավայրերի ազատագրումն ու կրակակետերի ոչնչացումը չէր ունենա ռազմավարական այն նշանակությունը, որն ունեցավ հետագայում: Ահա թե ինչու այդ երկու շրջանների համատեղ ազատագրումը և այնտեղի կրակակետերի ոչնչացումը մտան Արցախի պաշտպանական ուժերի ռազմավարական պլանի մեջ: Հադրութը և նրա մերձակա Ցոր, Բանազուր, Ջրաբերդ, Առաքյուլ, Քարագլուխ, Վանք, Տյուք, Նորաշեն և այլ բնակավայրեր ամեն օր ռմբակոծվում և հրետակոծվում էին Ջեբրայիլի ու Ֆիզուլու կրակակետերից: Այդ շրջանների բնակիչները վաղուց էին հեռացել իրենց բնակավայրերից: Նրանց փոխարինել էին թուրքերը, մոջահիդները և այլ վարձկաններ: Այնտեղ տեղակայված կրակակետերը չէին լռում, հետևապես դրանց վերացումը դարձել էր անհրաժեշտու-

թյուն: Ազատագրումն իրագործվեց ԼՂՀ զինվորական ուժերի և կամավորական ջոկատների ջանքերով ու հերոսական պայքարով: Իսկ ինչ մնում է Ղուբաթլուի և Ջանգելանի շրջանների ազատագրմանը և այնտեղի կրակակետերի ոչնչացմանը, դա նախ և առաջ բխում էր Արցախ-Հայաստան ազատագրական ուժերի ռազմավարությունից: Ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի հարավ-արևելյան տարածքներն ու բնակավայրերը անընդհատ ռմբակոծվում և հրետակոծվում էին Ղուբաթլուի ու Ջանգելանի տարածքներում տեղակայված կրակակետերից: Այդ ուղղությամբ ռազմական գործողություններ ձեռնարկելով, Արցախի ազատագրական ուժերը ճնշում գործադրելով հակառակորդի վրա, դուրս եկան Արաքսի ափ՝ Իրանի սահման:

Ասածներից հետևում է, որ Արցախի ազատագրական ուժերի գործողությունները նպատակ ունեին ամենից առաջ ապահովել ԼՂՀ բրնակչության անվտանգությունը: Հայ ազատագրական ուժերը վերահսկելով այդ շրջանները, ըստ էության, կատարում էին պատմական մեծ դեր՝ ԼՂՀ-ն փրկելով հեռահար հրետակոծություններից և այդ նպատակով սահմանները հեռացնելով հարավ-արևելք:

Ազատագրված տարածքները Արցախի հանրապետության համար ունեն նաև տնտեսական նշանակություն: Ազերիների իշխանությունը աղաղակում է, թե զրկվելով մի շարք տարածքներից, կրել են միլիոնների արժողությամբ նյութական վնաս՝ բամբակից սկսած մինչև հացահատիկ, մինչև անասնապահություն: Իսկ չէ՞ որ թուրք-ազերիները դարեր առաջ այդ տարածքները զավթելով հայերից, հարյուրամյակներ շարունակ միլիարդների եկամուտ են ունեցել, որը հազիվ թե հնարավոր լինի հաշվել: Իսկ հիմա, երբ անվտանգության պահանջից ելնելով այդ տարածքներն ազատագրվել են, անկասկած, այդ բերրի հողերի ամբողջական օգտագործումը Արցախի հանրապետության համար կունենա տնտեսական կարևոր նշանակություն: Եթե Քելբաջարը հարուստ է անտառներով, տարբեր հանքերով և նպաստավոր է անասնապահության, փայտամշակման, հանքանյութերի արտադրության համար, ապա հարավային շրջանները շատ նպաստավոր են հողամշակման, այգեգործու-

թյան, բանջարաբուծության, խաղողագործության, բանբակագործության, արևադարձային կուլտուրաների և անասնապահության զարգացման համար: Անկասկած՝ այդ ամենի նպատակային օգտագործումը Արցախի հանրապետությանը կբերի տնտեսական մեծ շահույթ: Մոտավոր հաշվումներով Արցախի հանրապետությունը հնարավորություն ունի միայն ազատագրված տարածքներից տարեկան նվազագույնը ստանալ մինչև 200 հազար տոննա հացահատիկ, 250 հազար տոննա խաղող, 30-40 հազար տոննա բանբակ, հազարավոր տոննաներ միս ու կաթնեղեն: Ել չենք խոսում մյուս բնագավառների մասին: Ազատագրված տարածքներում բնակություն կհաստատեն հազարավոր փախըս-տական ու բռնագաղթած ընտանիքներ: Եվ վեր կբարձրանա հանրապետության բնակչության բնական աճը: Այդ դեպքում ռեալ կդառնա Արցախի հանրապետության բնակչության թիվը հասցնել 300-350 հազարի:

Ազատագրված տարածքների պաշտպանումը, բնականոն օգտագործումը և վերաբնակեցումը ազգային խնդիր է, որին պետք է ձեռնամուխ լինեն բոլորը: Ներկայումս ազատագրված տարածքների հարավային շրջաններում հազիվ մի քանի հարյուր մարդ է բնակվում, այն էլ կենսապահովման միջոցների բացակայության պայմաններում: Այդ մարդկանց բնակությունը սոսկ ինքնանախաձեռնության արդյունք է: Արցախի և Չայաստանի պետական իշխանություններն այս հարցում ոչ մի նախաձեռնություն չեն ցուցաբերել, ինչն աններելի է:

Ազատագրված տարածքների պաշտպանության հարցը մտահոգիչ է բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, ընկերությունների, միությունների համար: Նրանք իրենց առաջ նպատակ են դրել քարոզչական միջոցներով ներազդել Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի և հանրային կարծիքի վրա՝ բացառելու Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ազատագրված տարածքների որևէ զիջում: Այս սկզբունքն է որդեգրել առանձնապես Չայ հեղափոխական դաշնակցությունը, որը պատերազմի տարիներին տալով հարյուրավոր զոհեր, զգալի դեր է խաղացել Արցախի պաշտպանության և վերոհիշյալ տարածքների ազատագրման գործում: Նման դիրքում է նաև Դեմոկրա-



տական կուսակցությունը: Ազատագրված տարածքների պաշտպանության հարցը բազմիցս շոշափվել է խորհրդարանական լսումների, գիտական կոնֆերանսների և ժողովների ժամանակ, Ազգային ժողովում տեղի ունեցած «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ<sup>8</sup>:

Ազատագրված տարածքների պաշտպանության և ոչ մի մետր հող չզիջելու գաղափարն արմատականորեն հիմնավորված է Արցախի ողջ բնակչության գաղափարախոսության մեջ: Նրանք պատրաստ են մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել մեծ զոհերի գնով ազատագրված տարածքները: Արցախցիները գտնում են, որ իրենց հանրապետությունը պետք է վերանվանվի Արցախի Չանրապետություն, ազատագրված տարածքները հայտարարվեն ազգային շահերի կենսական կարևորության և ազատ տնտեսական գոտի: Իսկ դրա համար այսօր հույժ կարևոր կենսական խնդիր է հանդիսանում ազատագրված տարածքների բնակեցումը փախստականներով ու բռնագաղթածներով, ապահովել այդ տարածքների տնտեսական վերելքը:

<sup>8</sup> Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ: Խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005 թ., Երևան, 2006:

# Ինչո՞ւ չի կարելի ստորագրել Կարսի տայմանագիրը

Տիրան Լոմնազյոյան

**Ա**յն օրվանից, երբ Հայաստանի և Թուրքիայի միջև հաստատվեց «ֆուսբոլային դիվանագիտությունը», ֆաղափական ֆարերը ցարժվեցին սեղից, ու երբ հանդարտվի աշխարհը, մեր այս կողմերում, այլևս նույնը չի լինելու: Տարածաբանի երկրները, մասնավորապես Թուրքիան և Հայաստանը, եթե չհաջողեն համաձայնել առկա հիմնական խնդիրների լուծման հարցում և երկու կողմերին էլ գոհացնող արդյունքի չհասնեն, ևս 20-30 տարի սևոդոթյամբ նիրհելու է երկու երկրների (չ)հարաբերությունը:

Բանակցությունների գաղտնիության տասճառով մենք կարող ենք միայն ենթադրություններ անել թե կողմերը ի՞նչ են տայմանավորվում կամ ինչի՞ օտուջ են բանակցում: Չի բացառվում նաև որ այս ընթացքում ղոսվող ասեկոսեները, բանակցողների կողմից, ժողովրդի զարկերակը չափելու կամ էլ դժվարամարս տասառները դյուրամարս դարձնելու նդասակով օրջանառության մեջ մսցված լինեն: Նման հոգեբանական հնարները հաճախ են օգտագործվում ժամանակակից ֆաղափականության մեջ: Այսուհանդերձ գոյություն ունեն որոշ հիմքեր որոնց վրա կարող

ենք բարձրացնել հավանականությունների ցենքը:


Նախ տեսք է ելակեք ընդունել երկու կողմերի տահանջներն ու սդասումները: Հայաստանը չունի նախատայման, ֆանի որ կողմնակից է առանց նախատայմանների հարաբերությունների հաստատման: Թուրքիո կողմից առաջ ֆաւված տայմանները կարելի է գլխավորապես երեք կետում ամփոփել. 1. Ղարաբաղի հարցի լուծում. 2. հրաժարում ցեղաստղանության տնդումներից, 3. Կարսի տայմանագրի վավերացում, ինչը նօանակում է ընդունել այսօրվա սահմանները: Կան նաև ուրիշ տայմաններ, որոնք Թուրքիան ավելացնում կամ տակասեցնում է ըստ ֆաղափական իրավիճակի: Մրանք երկրորդական են և դրանցից նա կարող է հեօսոթյամբ հրաժարվել: Սակայն վերը նօված նախատայմաններն էլ հավասարապես ծանրակեիո չեն: Օրինակ, վերջին օարաթների ընթացքում կարելի էր տեսնել, թե օահավետ առևսրի դետդում Թուրքիան ինչտիսի հեօսոթյամբ կարող է մոռանալ Ղարաբաղյան հարցի և ադրբեջանցի եղբայրների մասին: Ցեղաստղանության հարցը նույնպես չի դասվում ծայրագույն անհրաժեօսոթյան խնդիրների օարքում, ֆանի որ կան այդ խնդրի լուծման

ուրից սարբերակներ ևս, իհարկե, այն դեպքում, երբ չհաջողվի համոզել կամ ճնշել Հայաստանին, հրաժարվելու ցեղասպանության ղեկավարներից: Այսօր արդեն խոսվում է ներողություն խնդրելու և խորհրդանշական փոխհասուցման մասին, որով – ըստ ծրագրի – հայերը ղեկավարվելով լիովին գոհանան: Իսկ հողերի վերադարձի մասին ոչ միայն խոսք չի գնում, այլ և ուղղակի հիվանդագին է ընդունվում նման որևէ խոսակցություն: Այսպիսով, հասանք նաև Թուրքիոյ երրորդ և գլխավոր նախադասմանին, որից նա, ըստ երևույթին, ոչ մի դեպքում չի հրաժարվելու:

Տարածքների խնդրում թուրքերն ունեն մի սկզբունք, որը ժառանգել են օսմանցիներից և սելջուկներից. «Մոլ եմ վերցրել, արով էլ կսամ»: Եվ անգամ արով հետ սալուց հետո էլ թուրքի աչքը միշտ սևեռված է մնում այն տարածքին, որին թեկուզ մի օրով կողմ է իր ոտքը՝ սուրը ձեռքին: Ի միջի այլոց ասենք, որ տարածքներ հետ սալու խնդրում թուրքին համոզելը շատ դժվար է, բայց ոչ անկարելի: Պայմանով, որ փոխարժեքն իրեն գոհացնի: Սակայն այդ խնդրի մասին հետագայում:

Ուղղակի տարածքների հետ է կապված վերը նշված նախադասմաններից երրորդը. Հայաստան-Թուրքիա բանակցությունների ընթացքում շատ է խոսվում Կարսի դաշտի վավերացման մասին, և կարծես Հայաստանի իշխանությունները դաշտի անհատական գնալու: Իսկ Կարսի դաշտի վավերացումը Հայաստանի կողմից՝ նշանակում է հավիսյանս խաչ ֆաշել Արևմտահայաստանի վրա:

Նախ քան որ, թե դաշտի վավերացումը Հայաստանի կողմից հողերը ինչպես են բաշխված Հայաստանի հարևանների միջև: Առյուծի բաժինը ընկնում է Թուրքիային: Համարյա ողջ Արևմտահայաստանը գրավված է Թուրքիոյ Հանրապետության կողմից: Երկրորդ մեծ բաժնին տրվել է Ադրբեյջանը, ում սնորհության տակ են գտնվում Նախիջևանը, Քուր և Արաֆու գետերի միջև ընկած ողջ տարածքը՝ մինչև Կաստիլիոյ ծովի ավազանը: Վրաստանին է տրվում հայկական Ջավախքը: Այս բոլոր հարևաններն էլ ոչ միայն նդասակ չունեն նշված հողերը հետ վերադարձնելու, այլ նաև ավտոմատ ունեն այսօրվա Հայաստանի տարածքների նկատմամբ ևս: Բոլորովին այլ են հարաբերությունները չորրորդ հարևանի՝ Իրանի հետ, որին հասել է մի փոքր հայկական տարածք, բայց որը չունի հավակնություններ այսօրվա Հայաստանի տարածքների նկատմամբ:



Արևելյան ճակատի հրամանատար, Գյումրու և Կարսի կոնֆերանսի գլխավոր բանագնաց՝ Քյազիմ Կարաբեկիրն այս գրիչներով է ստորագրել դաշտի վավերացումը:

Գոյություն ունի ևս մի երկուրդ տարածքային Իրանի և Հայաստանի միջև երեք հարևանների միջև: Ի տարբերություն մյուսների, Իրանը ոչ միայն չի ավերում իր տարածքում գտնվող հայկական մշակութային կոթողները, այլ նաև վերականգնում է դրանք: Հայաստանի վերաբերմունքն էլ այլ է այժմ Իրանին դասկանող հայկական տարածքների նկատմամբ:

**Ի՞նչ է նշանակում դաշտի վավերացումը**

Ո՞ր հայը չի երագում մի Հայաստանի մասին, որը ձգվում է Սև ծովից մինչև Միջերկրական ծով, այնտեղից հասնում Ուրմիա լիճը և մինչև Կաստիլիոյ

ծովի ափերը: Անիրաւե՞ս: Բայց ո՞վ է ասում, որ երագները կամ նոստալադրոնները լիքով անդաման իրաւասական լինեն: Պէ՛տ է փորձել համատեղել ցանկությունները հնարավորությունների հետ: Քաղաքական բանակցությունները շատ են նման շուկայի սակարկությանը: Պահանջները լիքով է ներկայացնել ոչ թէ հավանականություններից ելնելով, այլ ցանկություններից, հետո, ըստ իրական դրամաների զիջելով, հասնել կարելիությունների առավելագույնին, իսկ եթէ ներկա դրամաները թույլ չեն տալիս ձեռք բերել ցանկալի նվազագույնը, ավելի լավ է հրաժարվել գործընթացից և լուծումը թողնել նոստալադրոն աղագային:

Նախ դարձնեմ մի հարց, թէ ինչքանով է մեզ անհրաժեշտ Թուրքիան և ի՞նչ առավելություն է տալու հայ-թուրք բարեկամությունը Հայաստանին, որի համար դատարանում ենք գին վճարել:

Դրսից և ներսից հավաստիացնում են, թէ Հայաստանի միակ այլընտրանքը Թուրքիան է՝ միջազգային ճանապարհներից օգտվելու և այդ միջոցով երկրի տնտեսական վիճակը բարելավելու համար: Եթէ ընդունենք անգամ, որ այդ միջոցը ճիշտ է, դատարան է հայ ժողովուրդը հանուն այդ հեռանկարի մեկընդմիջ հրաժարվել Արևմտահայաստանից:

Այժմ Հայաստանը ունի ելք երկու ուղղություններով: Մեկն Իրանի (ցամաքային) միջոցով, իսկ մյուսը Վրաստանի (ցամաքային և երկաթգծի): Չի կարելի ասել, թէ հետք է վրացիների հետ: Այնուամենայնիվ, Հայաստանը ունի գործող ճանապարհ, և քանի Վրաստանի քաղաքներն դեռ չէ, այդ ճանապարհը լինելու է նաև աղագայում: Երբ ռուս-վրացական բախումները ժամանակավորապես ազդեցին Հայաստանի աղագայփոխադրության վրա, Հայաստանում սկսեց սարածվել այն կարծիքը, թէ Վրաստանի ճանապարհն անվստահելի է ու լիքով է այլընտրանքային ճանապարհների մասին մտածել: Հայացքները սկսեցին Թուրքիայի վրա:

### **Ի՞նչ առավելություն կունենա Հայաստանը Թուրքիա հետ հարաբերություններ ստեղծելու և սահմանների բացվելու արդյունքում:**


Թուրքիան ունի մեր սարածաբանի ամենագագացած տնտեսությունը: Հայաստանյան շուկան հեղեղվելու է թուրքական աղագայով: Տեղական տնտեսության ոչ մի ճյուղ ունակ չի լինելու այս հեղեղը դիմադրելու, և սնանկանալու են բոլոր արտադրական միավորումները: Անմասն չի մնալու նաև գյուղատնտեսությունը:

Այս լույսի տակ դարձ է դառնում, որ թուրքական սահմանի բացման դեմքում Հայաստանի տնտեսության գագացման մասին առաջ քաշված մտքերը միջ են միայն: Իսկ ընդհանրապես ի՞նչ ունի Հայաստանը արտահանելու: Ունի՞ Հայաստանը մի բան, ինչ չունեն որից երկրներ: Այս հարցին կարելի է նորից միայն բացասական դատարան տալ: Այդ դեմքում ինչի՞ համար է մեզ անհրաժեշտ Թուրքիայի սահմանի բացումը՝ նկատի ունենալով այն գինը, որ դատարանում է Հայաստանից:

### **Ի՞նչ է իրենից ներկայացնում Կարսի դրամանագիրը**

Կարսի դրամանագիրը ստորագրվել է Խորհրդային Հայաստանի Խորհրդային Ադրբեջանի, Խորհրդային Վրաստանի և Թուրքիայի քաղաքական կառավարության միջև՝ Մոսկվայի ձևման տակ: Իրականում այս դրամանագիրը Մոսկվայի և Անկարայի միջև նախօրոք կնքված Մոսկվայի դրամանագրի «վավերացումն» է: Այստեղ դարձ է դառնում, որ այս դրամանագիրը ստորագրած կողմերից և ոչ մեկն այսօր արդեն de jure գոյություն չունի: Այս փաստը, սակայն, մեզ լիքով չէ փոքեցնի: Միջազգային գործածության մեջ ընդունված է, որ դրամանագրերը քաղաքական են ուժի մեջ մնալ ստորագրող կողմերի չգոյության դրամաներում էլ, եթէ կան իրավահաջորդներ և նրանք չեն մերժում սվալ դրամանագիրը: Թուրքիան, որը Հայաստանին ուզում է «համոզել» Կարսի դրամանագիրը վերանորոգելու հարցում, իրականում ինքն է խախտում այն արդեն 17 տարի քաղաքական, քանի որ այդ դրամանագրում գոյություն ունի կէտ, որը չի թույլատրում կողմերին փակել միջոցառական հաղորդակցության ճանապարհները ստորագրող երկրների միջև:

Այս ընթացքում մոռացության է մատնվել, որ նաև Ադրբեջանն է խախտել Կարսի դրամանագիրը: Պայմանագրում հստակ նշված է, որ Նախիջևանը ինքնավար տարածք է հանդիսանալու Ադրբեջանի «դատարանության» տակ: Մինչդեռ Ադրբեջանը դեռ 1989 թվականին առաջին անգամ խախտեց այդ դրամանագիրը՝ Նախիջևանի սվալ կարգավիճակը միակողմանիորեն վերացնելով, իսկ հետագայում՝ 1992 թվականին այն ուղղակի երկրի նախագահության դատարանին կաղելով: Այնպես որ, Կարսի դրամանագիրը չճանաչելու հարցում Հայաստանին մեղադրողները նախ լիքով է կարողանան դատարանում այն հարցին, թէ իրենք որքան են հարգում այդ դրամանագիրը:



**Ինչո՞ւ է Թուրքիային այդքան անհրաժեշտ, որ Հայասանը վավերացնի Կարսի դաշտի պայմանագիրը**

Հայասան-Թուրքիա բանակցություններում նախաձեռնությունն այժմ Թուրքիայի ձեռքին է, քանի որ նա կասարեց «Կարսի դաշտի պայմանագրի» ֆայլը և այսօր խոսակցությունը ծավալվում է լոկ այն ընդունելու-չընդունելու շուրջ: Հայասանին անհրաժեշտ է հակաֆայլ կասարել և առաջ անցնել նոր ուղղություն մտցնելով:

Գոյություն ունեն նաև երկու այլ կարևոր դաշտային պայմանագրեր՝ Սևրը և Լոզանը: Այսօր հայկական կողմից հնչում են կարծիքներ, թե Սևրի դաշտագիրը կարելի է վերականգնել, սակայն շատ անհավանական է կյանքի կոչել մի դաշտային պայմանագիր, որը չի վավերացված ոչ մի ստորագրող դաշտային կողմից: Մինչդեռ առավել նպաստալից է Լոզանի դաշտային պայմանագիրը: Այն դաշտային պայմանագիրը, որը առաջին հայացքով ոչ մի դրական բան չի դարձնակում իր մեջ հայկական կողմի համար: Մակայն գոյություն ունի մի շատ հեռավոր հանգամանք. Լոզանի դաշտագրով ստորագրող դաշտային կողմերը ճանաչում են Թուրքիայի բոլոր սահմանները՝ բա-

ցառությամբ արևելյան սահմանների, ինչը չի հիշատակվում սկյալ դաշտային պայմանագրում: Միանություն կլինե՞ր մտածել, թե սա մոռացության արդյունք է: Նշանակում է որ այստեղ դիտարկություն կա և եվրոպական դաշտային կողմերը ուզեցել են անավարժ թողնել այդ հարցը, լուծումը թողնելով աղաքային: Արևելյան սահմանները Հայաստանին ընդունել սալու իր ջանասիրության մեջ նկատվում է, որ Թուրքիան ֆաշիստական է այս «թույլ օղակին» և ուզում է այդ խնդիրը լուծել Հայաստանին մոլորության մեջ գրցելով: Կարսի դաշտային պայմանագիրը Հայաստանի վզին փաթաթելով, Թուրքիան լուծելու է նաև մի ուրիշ հարց, կամ գոնե նոր լծակներ է ձեռք բերելու այդ հարցում: Կարսի դաշտային պայմանագիրը նախատեսում է նաև համընդհանուր ներում բոլոր շեշտակի դաշտային հանցագործությունների համար: Թուրքիան ոչ մի դեմքում չի ընդունում ցեղասպանություն ճեղքմանը, իսկ «դաշտային հանցագործություն»-ը կարող է ընդունելի լինել: Իսկ երբ Հայաստանը ստորագրի Կարսի դաշտային պայմանագիրը, Թուրքիան վերջնականապես ազատվելու է 1915 թվականին կատարվածների բեռից և այսպիսով փակվելու է նաև «հայկական հարց»-ը: Սա էլ դեռ բոլորը չէ. այստեղ արժե հիշատակել, որ Կարսի դաշտային պայմանագիրը չեղյալ է համարում կողմերի միջև կնքված նախկին դաշտային պայմանագրերը: Այսպիսով, Հայաստանը ընդունելով Կարսի դաշտային պայմանագիրը, հրաժարվելու է նաև վերջնականապես Սևրի դաշտային պայմանագիրը որևէ ժամանակ վերակենդանացնելու հնարավորությունից: Իսկ ինչո՞ւ միայն Սևրը. Ազգերի լիգան (Միացյալ ազգերի կազմակերպության նախասիղը) ընդունել էր 1921 և 1922 թվականներին երկու որոշումներ, որտեղ ասվում էր, որ հայերը դեռ էլ իրենց ազգային տարածքը ունենան Թուրքիական Հայաստանում: Այդ որոշումներից չեն կարող հրաժարվել լիգայի մասնակից դաշտային կողմերը: Այս ամենը գործարկելու են երբ մի օր հարմար արիթ ընձեռվի այն սեղանի վրա բերելու համար, սակայն ստորագրելով Կարսի դաշտային պայմանագիրը Հայաստանը վերջնականապես հրաժարվելու է այս կարելիությունից: Այսօր Հայաստանը կանգնած է լուրջ ճամփաբաժանի առաջ: Հավիսյանս կորցնել Արևմտահայաստանը՝ շահելով չգիտես թե ինչ, և կամ չսարվելով լուրջ հեռանկարների ուղղությամբ՝ գտնել այլընտրանքային լուծումներ: Իսկ նման լուծումներ կան: Չեն կարող չլինել:



# Ժամանակակից Հայոց դասնութիւնն ու յաղթանակի սեսութեան անհրաժեշտութիւնը

(Սկիզբը՝ «Դրօշակ», N 8)

Միզան Խարսալեան

Լիդել Չարտի համա-  
ծայն՝ չյաղթելը երբեմն  
ինքնին շահ է: Ուրեմն  
չկորսնցնելը նաեւ հաւասար  
է շահելո՞ւ: Ինչու ոչ, եթէ այդ  
վիճակը կը համընկնէ հե-  
տապնդուած քաղաքական  
նպատակին: Եթէ կողմերէն  
մէկը պատերազմի կերթայ  
աննպաստ պայմաններու  
տակ, ռազմական անյուսալի  
պայմաններու տակ, ար-  
դեօ՞ք յաղթանակի համա-  
զօր չէ այդ պատերազմէն  
անվնաս դուրս գալը: Յա-  
ճախ մեր պատմութեան մէջ  
մենք անհրաժեշտաբար  
պատերազմի ենք գնացել

ունենալով յաղթանակի միայն նուազագոյն յոյս:

Մի այլ կարելոր հարց կառնչուի **յաղթանակ-ժամանակ** յարաբերակցութեան. պատերազմում յաղթելը ունի՞ ժամանակային ասպեկտ այն իմաստով, որ պէտք է յաղթել որոշ ժամանակահատուածի մը մէջ, եւ կամ որքա՞ն երկար ժամանակի վրայ պէտք է պահպանել յաղթանակը:

Անշուշտ յաղթանակը որոշ ժամանակի կը կարօտի, հետեւաբար՝ յատկացուած ժամանակն ու ջանքերը նոյն չափի հետեւանքներ պիտի ունենան յետպատերազմեան կացութեան արժեւորման պահուն:

Ռազմավարական յաղթանակը նոյնպէս պիտի ունենայ մնայունութեան-կայունութեան ժամանակային ասպեկտ: Յաջողութեան մասին կարելի չէ խօսիլ, երբ յաղթանակի կարգավիճակը կարելի է պահել միայն մի քանի շաբաթներու կամ ամիսներու համար:

Եւ որովհետեւ ռազմավարական կարգի յաղթանակը քաղաքական արդիւնքներու արժեւորում է, կարելի է այն միշտ վերատեսութեան կամ վերարժեւորման ենթարկել:

Յաղթանակը կարելի է վերատեսութեան ենթարկել իրագործումներու եւ կամ վճռորոշութեան պայմաններէն մեկնելով: Մի բան, որ մեզ կը յուշէ յաղթանակի ոչ մնայուն ըլլալու գաղափարը: Մնայունութեան աստի-

ճանը ուղղակիօրէն կապուած է իրագործումի եւ այդ իրագործումներու վճռորոշականութեան: 1918ին Ա. աշխարհամարտը, թու՛մ էր, պիտի աւարտուի անգլո-ֆրանս-ամերիկեան յաղթանակով: Ժամանակի ընթացքին այդ արդիւնքի վճռորոշ ըլլալու հիմքերը հարցականի տակ դրուեցան եւ վերարժեւորուեցան: Այսօր այդ պատերազմի արդիւնքը ունի բոլորովին այլ գնահատում, այն կը դիտուի որպէս զինուորական յաղթանակ, որ սակայն ոչ միայն լուծում չբերեց աշխարհաքաղաքական խնդիրներին, այլ եւ որոշ պարագաներու աւելի սրեց առկայ խնդիրները: Այսօր Միջին Արեւելքի աշխարհաքաղաքական պատկերը եւ շրջանէն ներս տիրող կացութիւնը կը համարուի այդ պատերազմի հետեւանք-արդիւնք ու հետզհետէ առաւել տարածում կը գտնէ այն համոզումը, որ Ա. աշխարհամարտի ծնունդ խաղաղութիւնը իրականութեան մէջ բոլոր խաղաղութիւններու մահուան պատճառն է:

Մարտավարական եւ գործողութեանական (tactical and operational) յաղթանակները, որ ունին արժեւորումի աւելի յստակ հիմքեր, նաեւ հակում ունին անխախտ մնալու: Միայն ծայրայեղ լուսանցքային յաղթանակներու պարագային վերատեսութեան կամ վերամեկնաբանութեան հնարաւորութիւն կայ: Նոյնն է պարագան խիստ վճռորոշ ռազմավարական յաղթանակներուն: Շատ աւելի դժուար է վերատեսութեան ենթարկել, վերարժեւորել **ամբող-**



**ջական յաղթանակը**, որ վերջնականապես կը լուծէ խնդրոյ առարկայ քաղաքական խնդիրները, քան սանդղակի վրայ մի այլ նուազ վճռորոշ բնոյթի յաղթանակ:

Պատերազմի գինը արդեօ՞ք ազդեցութիւն ունի յաղթանակի արժեւորման մէջ: Անկասկած: Լիդրել Չարտ կը մատնանշէ, որ յաղթանակը անօգուտ է, եթէ այն կը քայքայէ յաղթողի տնտեսական, ռազմական եւ կամ ընկերային դրամագլուխը: Պատերազմի գինը անկասկած, որպէս գործօն, կը մտնէ յաղթել կամ կորսնցնել հաւասարման (equation) մէջ: Այս հաստատունը մեզ կը վերադարձնէ այն խնդրին, որ կարելի է տակտիկական յաղթանակ ապահովել այնպիսի մի մարդկային եւ նիւթական բարձր գին վճարելով, ինչն ի վերջոյ, անհնար կը դարձնէ ռազմավարական յաղթանակի ձեռքբերումը եւ կառաջնորդէ ռազմավարական պարտութեան:

Այս կացութեան դասական օրինակը Պիւռոսի յաղթանակն է (279 թ. Ք. ա.): Չոմէացիներու դէմ արիւնոտ յաղթանակ ապահովելուն առթիւ ստացած շնորհաւորանքներուն նա կը պատասխանէ այսպէս. «Մէկ այսպիսի յաղթանակ եւս եւ մենք կոչնչանանք»:

### Ո՞վ որոշում կը կայացնէ

Մարտավարական մակարդակի յաղթանակներու չափելիութիւնը կը հեշտաց-



Կլաուսվից

նէ նաեւ որոշումի կայացումը, ուր տարակարծութիւն չկայ թէ՛ ո՞վ յաղթեց եւ ո՞վ կորսնցուց: Սակայն ռազմավարականի եւ գործողութեանական (operational) յաղթանակի պարագային հարցը բոլորովին այլ է: Եթէ ռազմավարական յաղթանակը արժեւորումն է յետպատերազմեան քաղաքական հանգամանքներուն, ուրեմն արժեւորումը կատարողի ինքնութիւնը եւս հիմնական նշանակութիւն ունի: Ո՞ր կողմը կորոշէ թէ ինք յաղթանակեց կամ պարտութիւն կրեց՝ յաղթակա՞ն կողմը, թէ՞ պարտուածը: Կամ երկո՞ւքը: Իսկ կարելի՞ է, որ այդ արժեւորումը կատարուի անշահագրգիռ մի երրորդ ուժի կողմէ: Կարելի՞ է, որ արժեւորումը կատարուի բազմաթիւ մարդկանց

կողմէ: Այս վերջինի պարագային, հնարաւոր է մէկէ աւելի հաւասարարժէք որոշումներ կայացնել: Ահա խնդիրներու մի երկար շարք, երբ դեռ եւս կը խօսինք միայն արժեւորում-գնահատանք իրագործողի մասին:

Կայ եւս խնդիրների մի այլ շարք, որ կառնչուի օգտագործուելիք չափորոշիչներին: Կա՞ն առարկայական կրիտերիաներ: Արդեօ՞ք այս չափորոշիչները ունին մշակութային հիմքեր: Արդեօ՞ք անոնք կը փոխուին ժամանակի ընթացքին: Կա՞ն պատերազմի բնոյթին – ընդհանուր կամ սահմանափակ - իւրայատուկ չափորոշիչներ:

Յիշեցումի կարգով, վերը ըսուեցաւ, որ գերագոյն յաղթանակը յետպատերազմեան հանգամանքներու քաղաքական արժեւորումն է, եւ այն իր քաղաքական բնոյթի բերմամբ տարբեր կարծիք-տեսակետներու արտայայտութիւն է: Չետեւաբար, պիտի հարց չտալ՝ ո՞վ որոշում կը կայացնէ, այլ՝ որո՞ւ տեսակետը տիրական է ու ծանրակշիռ: Չայերուս համար այն կարծիքները, որ կարելոր են, հերթաւորում են ըստ հետեւեալի.

1. հայ ժողովուրդը,
2. հայ քաղաքական եւ զինուորական ընտրանիները. առաջին երկուքը միասնաբար կը կազմեն հայ հասարակական կարծիքը ռազմական խնդիրներու շուրջ,
3. Չայաստանի եւ հայ ժո-



ղովուրդի բարեկամներու եւ դաշնակիցներու կարծիքը,

4. համաշխարհային կարծիքը. այլ խոսքով՝ մնացեալ բոլորի կարծիքը:

Որքան խնդիրը կը հեռանայ քաղաքական բեմէն, բազմապատիկ արագութեամբ կը նուազի հանրութեան հետաքրքրութիւնը, մինչեւ որ հարցը կը տեղադրուի պատմաբաններու գրասեղան: Այդ պահին յաղթելու կամ պարտուելու հիմնական արժեւորումը արդէն կատարուած է, պատմաբաններուն կը մնայ մանրամասնութիւններով զբաղուել: Պատմական բանավեճերը կը բերեն միայն փոքր սրբագրութիւններ, մեկնաբանութեան պատշաճեցումներ:

Ինչպէ՞ս կը ճշտենք հայ ժողովուրդի, հայութեան հանրային կարծիքը.

Ճշտորոշումը կառաջանայ երկու պրոցեսներու միաձուլումով. առաջին հերթին քաղաքական առաջնորդները կը փորձեն հանրութեան համոզել: Կը յաջողին թէ ոչ, կախեալ է կացութենէն, հանգամանքներէն եւ շօշափելի տուեալներէն, պատգամի համոզիչ ըլլալու հանգամանքէն եւ հանրութեան կողմէ ընկալուած պատգամ փոխանցողի իրական լեգիտիմութենէն եւ հաւաստիութենէն: Հաւաստի քաղաքական այրեր, իրենց հետ ունենալով ռազմական իրագործումներ, եւ զինուած քաղաքական ձեռքբերումներով,



րով, կրնան յայտարարել յաղթութիւն եւ դառնալ **դէ-ֆակտո** յաղթանակակիրներ: Երկրորդ պրոցեսը աւելի շատ տարօրինակ է. ժողովուրդը յաղթութիւն կը ճանաչի, երբ՝ այն կը տեսնէ որպէս յաղթութիւն: Ժողովուրդը

կարծիք կը կազմէ առկայ տուեալներու վրայ հիմնուած: Անշուշտ այս աւելի սուբյեկտիւ գործընթաց է, որ կամ չի ենթարկուիր քաղաքական հակակշռի եւ կամ ենթակայ է ապաքաղաքա-



կան ուժերու հակակշռին:

Արդիւնքում՝ ռազմավարական մակարդակի վրայ յաղթանակը կամ պարտութիւնը կը դառնան հանրային ընկալումի խնդիրներ, եւ կամ կուսակցական քաղաքականութեան պատանդ, դիւանագիտական բանակցութիւններու նիւթ:

Անշուշտ, նմանօրինակ գործընթաց տեղի կունենայ հակառակորդ երկրի կամ կազմակերպութենէն ներս:

Մի այլ հանգամանք. Կլաուսվից կըսէ որ յաղթու-

թիւնն եռակողմանի կառոյց է եւ ունի երեք տարրեր. **թշնամիի նյութական մեծ կորուստը, բարոյական կորուստը եւ թշնամիի կողմէ այդ կորուստներու բարձրաձայն ընդունումը՝ զուգորդուած նախապատերազմեան նպատակներից հրաժարումով:**

Այս միտքերը լուսարձակի տակ կը դնեն մի իրականութիւն. ով եւ ինչպէս կորոշէ կորուստը: Կորուստի ընդունումը կարելոր է: Կը պատահի, որ ինչ-ինչ պատճառներով կողմերէն մէկը կամ միւսը կը մերժեն ընդունիլ բացա-

յայտ կորուստը եւ կը շարունակեն պատերազմը:

Պարտութեան ընդունումով անկարելոր կը դառնայ՝ ով յաղթեց հարցին պատասխանը: Երկու կողմերը պատերազմի ելքը ընդունելով որոշման վերաբերուող հնարաւորութիւն չեն ձգեր:

Աւանդաբար, պետութիւններ պարտութիւն կընդունին ստորագրելով ինչ որ ձեւի խաղաղութեան համաձայնագիր, իսկ բանակները պարտութիւն կընդունին յանձնուելով կամ զինադադար ստորագրելով:

Ասոնք շատ կարելոր, նոյնիսկ էական, սիմբոլիկ արարքներ են՝ կապուած պարտութեան եւ յաղթանակի հետ: Յաղթանակ կամ պարտութիւն յայտարարող պաշտօնական արարողութիւնները նոյնպէս անչափ կարելոր են:

## Ի՞նչ կարելի է եզրակացնել

Յաղթանակը ունի երեք մակարդակ՝ մարտավարական, գործողութեանական (operational) եւ ռազմավարական: Առաջին երկու մակարդակներու վրայ յաղթանակը ունի ռազմական հանգամանք: Իսկ ռազմավարական հարթութեան վրայ յաղթանակը կապուած է յետպատերազմեան քաղաքական հանգամանքներու գնահատումին, ինչպէս նաեւ հանրային կարծիքին: Այս վերջինն է, որ կորոշէ՝ ով շահեց եւ ով կորսնցուց: Թէեւ ռազմական իրավիճակը կարելոր

է հանրութեան համար, սակայն վճռորոշ դեր ունին քաղաքական չափորոշիչները:

Արդիւնաւետ ըլլալու համար անհրաժեշտ է, որ յաղթանակը ընդունուի ու ճանաչուի հակառակորդի կողմէ, եւ յաղթանակը պահպանուի երկար ժամանակի վրայ:

Ուրեմն, **ռազմավարական** յաղթանակը դրական գնահատումն է յետպատերազմեան քաղաքական իրավիճակին՝ հիմնուած իրագործումի եւ վճռորոշութեան տուեալներու վրայ՝ ճանաչուած է, ժամանակին դիմացող, եւ իր հետ կը բերէ հակամարտութեան տոն տուող քաղաքական խնդիրներու լուծում:

Նոյն ձեւով, **մարտավարական** յաղթանակները ռազմական դաշտի վրայ ձեռք բերուած զինուորական արդիւնքներն են, որոնք հակամարտութեան մի կողմին կուտան նշանակալի, ճանաչուած առաւելութիւններ՝ հակառակորդին ի դէմ: Այս սահմանումին մէջ մարտավարականը փոխարինելով **գործողութեանականով** եւ վերացնելով «ռազմադաշտ» տերմինը կը ստանանք **գործողութեանական (operational) յաղթանակի** սահմանում:

### Ինչպէ՞ս յաղթել

Թէ ինչպէս պէտք է յաղթել պատերազմում՝ տեսականօրէն բաւական յստակ ձեւակերպուած է: Սակայն դժուար



րը իրագործումն է: Կլաուսվից կը մատնանշէ, որ պատերազմը միաժամանակ ֆիզիքական եւ բարոյական կռիւ է:

Կլաուսվիցի յաղթանակի դեղատոմսը պարզ է. եթէ կուզես թշնամիին տանուլ տալ, ապա հարկ է քու ճիգերը համապատասխանեն հակառակորդի դիմակայման ուժին, ինչը կարելի է արտայայտել նաեւ երկու անքակտելի ազդակներու բազմապատկութեան արդիւնքով:

Հասանելի ընդհանուր միջոցները՝ բազմապատկուած կամքի ուժեղութիւնով:

Ուրեմն՝ **դիմադրականութիւն (Դ) = միջոցներ (Մ) x կամք (Կ):**

Յաղթանակի կը մերձենանք եթէ Դ-ն կը մօտենայ գերոյի:

Հակառակորդը կարող է Դ-ն մղել դէպի գերօ, նուազեցնելով թշնամիին կամքը եւ կամ միջոցները (եւ կամ ալ երկուքը):

Յաղթանակի դասական կոնցեպտը հիմնուած է թշնամիին դիմադրութեան միջոցներու ջլատման վրայ՝ ռազմական ուժերու լրիւ քայքայման կամ չեզոքացման, իսկ երբեմն նաեւ այդ ուժերու կազմալուծման ճամբով: Հիմնական նպատակը թշնամին զրկել դիմադրելու հնարաւորութենէն: Խաղի գաղտնիքը միշտ եղած է թշնամիի ուժը քանդելը կամ մաշեցնելը: Ֆիզիքական մի այլ մօտեցում է թշնամիի համակարգերու անդամալուծումը: Դիմադրութիւնը ապարդիւն դարձնելու համար, յատկապէս ռազմական հրամանատարութեան եւ հսկողութեան համակարգերը պէտք է անդամալուծել:

Յաղթանակի մեխանիզմը նպատակ ունի թշնամին



դնել այնպիսի մի կացութեան մէջ, ուր քո սեփական զինեալ ուժերը կարենան ուղղակի պարտադրել քո կամքը:

Թշնամիի կամքը տկարացնելու կամ չեզոքացնելու միտումով, հոգեբանական յարձակում-արշաւները կը գործեն ամբողջութեամբ այլ եղանակով. գործողութիւնները նպատակ ունին ոչ թէ մի իրավիճակի ստեղծումը, ուր դու կարենաս պարտադրել քո սեփական կամքը, այլ կորզել թշնամիի կամքը եւ անոր պարտադրել պատերազմը լքել ու հեռանալ:

Ուրեմն եթէ ընդունինք կլաուսվիցեան այն հաստատումը, թէ պատերազմի հիմնական դերակատար ուժեր կը հանդիսանան ժողովուրդը, կառավարութիւնն ու ռազմական ուժերը, ապա կարելի է նաեւ իւրաքանչիւրին վերագրել սեփական կամք: Որո՞ւ կամքը ամենէն էականն է եւ ծանրակշիռ: Պատասխանը կուտայ ֆրանսացի զօրավար եւ տեսաբան Անդրէ Բիւֆրէ (Andre Beaufre) մի նոր հարցադրումով, ան կը գրէ. որո՞ւ կուզենք տարհանոգել:

Ի վերջոյ պէտք է տարհանոգենք թշնամիի կառավարու-

թեան: Սակայն կարգ մը պարագաներու աւելի հեշտ է աշխատիլ առաջնորդներու, ազդեցիկ անհատականութիւններու վրայ, ընտրելով այնպիսի վիճարկութիւններ, որոնք կը դիպչին այդ մարդկանց տկարութիւններուն՝ խոցելի կէտերուն:

Որպէս այլընտրանք կարելի է նաեւ ներգործել հանրային կարծիքի մի մասի վրայ: Ինչ որ ալ ըլլան միջոցները, հիմնականը թշնամիի կամքը կոտրելն է: Միւս կողմէ՝ ճգնումի եւ «մամլիչ» գործողութեան (Counterinsurgency) աւելի նոր օրերու տեսութիւնը կը գործէ մի այլ մեկնակետով: Այստեղ թիրախը ժողովուրդն է ու անոր պատերազմին ի նպաստ աջակցութեան չեզոքացումը: Ուրեմն, նաեւ հակազդեցութեան հիմնական թիրախը պէտք է ըլլայ հակառակորդ ժողովուրդի կամքի կոտրումը: Ժողովուրդի կամքը մեր հակազդեցութեան տակ պահելն ու հակակշռելը համազօր է պատերազմը շահելու: Յաղթանակի տեսութեան համատեքստի մէջ բնակչութիւնը ռազմավարական նշանակութիւն ունի, որովհետեւ ժողովուրդը շահիլը հաւասար է պատերազմը շահելուն: Այս հաստատումը ինքնաբերաբար կառաջացնէ մի այլ խնդիր. որո՞ւ կամքը ռազմավարական նշանակութիւն ունի, կախեալ է պատերազմի բնոյթից: Մի բան, որ կը ցոլացնէ կլաուսվից-

եան այն հաստատումը, թե պետական առաջնորդի կամ զինուորական հրամանատարի առաջին եւ ամենամեծ գործն է հասկնալ սպասուող պատերազմի բնոյթը:

Ամբողջական պատերազմի պարագային անհրաժեշտ է կոտրել առնուազն կառավարութեան կամքը եւ ժողովուրդի կամքը: Սա անհրաժեշտ է հակամարտութեան մշտական լուծում ձեռք բերելու համար:

Իսկ մասնակի, սահմանափակ պատերազմի պարագային, թերեւս բաւարար է կոտրել կառավարութեան կամքը, պայմանով, որ այդ կառավարութիւնը ունենայ եւ միջոց, եւ հնարատրութիւն՝ իր որոշումները պարտադրելու հասարակութեան: Այստեղ պէտք է ընել երկու զգուշացում. առաջին՝ ապահովագրութիւն չկայ, որ եռեակի կամքերից մէկի չեզոքացումը մեզ անպայման կը տանի յաղթանակի: Երկրորդ՝ այս մոդելը կարելի չըլլայ կիրառել ոչ-պետական գործօններու պարագային:

Կամքը կոտրելու փաստացի եղանակը թշնամին համոզելն է այն բանի մէջ, որ դիմադրելը ի զուր է, որ դիմադրութեան համար ներդրուած արժէքը կը գերազանցէ ընկալուելիք շահերուն: Միակ մեթոդը, որ **ուղղակի** կը ներգործէ կամքին վրայ, ինֆորմացիոն, տեղեկատուական գրոհներն ու արշաւներն են: Միւս բոլոր



ՀՀ ՊՆ նախարար  
Ս. Օհանյան

միջոցները միայն անուղղակի ազդեցութիւն ունին կամքի վրայ:

Տեղեկատուական գրոհներն ու արշաւները ռազմավարական կարելութիւն ունին եւ անոնց արդիւնքն է, որ կորոշէ՝ ով դուրս կուգայ յաղթական:

Հիմնական դժուարութիւնը, որ հայութիւնը կանտեսէ, այն է, որ մեր ժամանակներուն պատերազմի մտային, ֆիզիքական եւ հոգեբանական երեսները լաւ ըմբռնելու համար հարկ է նախ հասկնալ մի բան. տեղեկատուութեան հակակշռել գրեթէ անհնար է: Այս թերութիւնը կը բացատրէ մեր ձախողութիւնները եւ դրական ռազմավարական արդիւնքներու բացակայութիւնը ազերի եւ թրքական ճակատներուն վրայ:

Եզրակացութիւն. յաղթանակը կամք կոտրելու մասին է:

Այս յօդուածը պարզապէս մի

փորձ էր որոշ հարցադրումներ կատարելու: Պատասխանները թերեւս ամբողջական չեն: Սակայն յոյս ունիմ, որ այս միտքերը կը խթանեն բանավեճին: Եթէ չխօսինք այս խնդիրներու մասին, վտանգը կայ, որ 21րդ դարուն հայութիւնը պիտի շարունակէ ձախողիլ իր մարտավարական հրաշալի յաղթանակները վճռորոշ ռազմավարական արդիւնքներու վերածելու:

## Աղբիւրներ

1. Andre Beaufre, An Introduction to Strategy, with Particular Reference to Problems of Defense, Politics, Economics, and Diplomacy in the Nuclear Age, R.H. Barry, trans. London: Farber and Farber, 1965.
2. Carl von Clausewitz, On War, Michael Howard and Peter Paret, eds. (Princeton, N.J.: Princeton Univ. Press, 1989.
3. Colin S. Gray, Defining and Achieving Decisive Victory (Carlisle, Pa.: USArmyWar College, Strategic Studies Institute, 2002.
4. Basil H. Liddell Hart, Strategy (New York: Frederick A. Praeger, 1954, reprint 1967
5. William C. Martel, Victory in War: Foundations of Modern Military Policy (New York: Cambridge Univ. Press, 2007.
6. Azar Gat, A History of Military Thought: From the Enlightenment to the Cold War (New York: Oxford Univ. Press, 2001.
7. Sun Tzu, The Art of War, Samuel B.Griffith, trans. NewYork: OxfordUniv. Press, 1973.

## ԱԶԳԱՅՆԱՍՈԼՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՐԽԼՎՈՂ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ\*

Հայկազուն Ալվրոցյան

**հ**սրայելում հրատարակվող «Հասարեց» թերթի վկայությամբ թուրք հասարակության 64%-ը չի ցանկանում ունենալ իր հարեւանությամբ ապրող հրեաներ, 54%-ը՝ քրիստոնյաներ, 43%-ը՝ ամերիկացիներ: Բահ-չեշեհիր համալսարանի կատարած այս հետազոտության տվյալներով թուրք հասարակության համար անցանկալի երկրների շարքում առաջինը Իսրայելն է, երկրորդը՝ Հայաստանը, երրորդը՝ ԱՄՆ-ը:

### Միասնական ինքնության կեղծիքի փլուզումը

Հանրապետության ստեղծումից ի վեր Թուրքիայի Սահմանադրությունը չի ճանաչում այդ

երկիրը բնակեցնող մի քանի տասնյակ ազգերի ու ժողովուրդների գոյության փաստը՝ չխոսելով արդեն նրանց ազգային, լեզվական, մշակութային ու կրոնական իրավունքների մասին: Բացառություն են կազմում Լոզանի պայմանագրով կրոնական համայնքի իրավունք ստացած հայկական, հունական և հրեական համայնքները՝ այն էլ միայն Ստամբուլում: Սրանք էլ, անշուշտ, ընդամենը կրոնական համայնքներ են և ոչ ավելին: Սահմանադրությամբ ամրագրված է, որ Թուրքիայի բոլոր քաղաքացիները թուրքեր են, անգամ 15-20 միլիոն հաշվվող քրդերը լեռնային թուրքեր էին կոչվում: Թուրքիայի յուրաքանչյուր քաղաքացի դպրոցական կրթության բոլոր օրերին անդադրում կրկնել ու կրկնում է մեկ երդում.

*Թուրք եմ, ազնիվ եմ, աշխատասեր եմ:  
Սկզբունքս՝ փոքրերիս պահապան լինելը, մեծերիս հաշվի առնելն է:*

\* Բացի թիվ 1 հղումից՝ բոլոր թարգմանությունները թուրքերենից կատարեց Սելինե Անունյանը:

Հայրենիքս, ազգս անձիցս առավել սիրելի:  
Բարձրագույն նպատակս բարձրանալ-առաջ  
գնալն է:

Հե՛յ, մե՛ծ Աթաթուրք,

Երդվում եմ անդադար քայլել քո բացած ճա-  
նապարհով՝


Դեպի քո կողմից մատնացույց արված նպա-  
տակը:

Թո՛ղ իմ գոյությունն ընծայվի թուրքի բարօ-  
րությամբ:

Ի՛նչ երջանիկ է նա, ով ասում է՝ թուրք եմ:

1915-23 թթ. հայերի, հույների ու ասորիների ցեղասպանությունից հետո, նրանց մնացորդացին և թուրքիայի մի քանի տասնյակ այլ ժողովուրդների, պետականորեն պարտադրվեց ազգային ու կրոնական մեկ ինքնություն՝ թրքություն և իսլամ՝ փորձելով կերտել այդ «երջանիկ» թուրքին: Ահա այս քաղաքականությունը իրականացնողների ելույթներից երկու դասական նմուշ. «Մենք բացահայտ ազգայնամուլներ ենք: Մենք ցանկացած գնով պետք է թուրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում» (Թուրքիայի վարչապետ, հետագայում նախագահ Իսմեթ Ինիյուլի 1925 թ. ելույթից), «Մենք ապրում ենք անենաազատ երկրում՝ Թուրքիայում, որտեղ թուրքը այս երկրի միակ տերն ու տիրակալն է: Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրավունք (Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարար Մահմուդ Էսադի 1930 թ. ելույթից, [www.noravank.am](http://www.noravank.am))»:


Ժողովուրդների թուրքացման ու իսլամացման քաղաքականությունը կիրառվում էր հասարակական կյանքի բոլոր բնագավառներում անխտիր՝ հաճախ ընդունելով աննախադեպ ձևեր, ինչպիսին է, օրինակ, ունեցվածքի հարկը, որի հետևանքով ոչ մահմեդականները վաճառեցին իրենց ողջ ունեցվածքը, բայց դարձյալ չկարողացան վճարել անհավանական բարձր հարկերը և աքսորվեցին Աշքալե՝ քարջարդելու: Այս և բազմաթիվ այլ միջոցառումների հետևանքով ([www.baskinoran.com](http://www.baskinoran.com)) ոչ



Լոզանի պայմանագիրը

քրիստոնյա տարրը ստիպված կամ իսլամանում «թրքանում» էր, կամ լքում երկիրը: Իսկ ովքեր այս կամ այն կերպ պահպանել էին ազգային և կրոնական ինքնությունը, 1960 թ. և հատկապես 1980 թ. զինված հեղաշրջումներից հետո բռնի կերպով իսլամացվեցին (մասնավորապես Արևմտյան Հայաստանում պահպանված հայությունը, մահվան սպառնալիքի տակ, ամբողջությամբ իսլամացվեց): Այսպիսով՝ կարծես «իրականանում» էր Թուրքիայի բոլոր ժողովուրդների թրքացման-իսլամացման պետական քաղաքականությունը:

Ըստ նույն աղբյուրի՝ «Հանրապետության էթնոկրոնական ճարտարապետության հանդեպ



Իսմեթ Ինիճյու

քաղաքականությունը մշտապես ուղղված է եղել 2 նպատակի. ա) Ազատվել ոչ մահմեդականներից: Քանի որ տարբեր կրոններ դավանելու պատճառով չէին կարող ուծացվել: բ) Ձուլել քրդերին և ոչ թուրք մյուս մահմեդական խմբերին»: Սակայն պատմությունը փաստում է, որ թուրքական իշխանություններին չհաջողվեց վերջնականապես ազատվել ոչ մահմեդականներից, թեև բազմաթիվ հայեր, ասորիներ և հույներ հեռացան երկրից: Բռնի ուծացման և իսլամացման քաղաքականությունը հանգեցրեց միասնական թուրքական ինքնության պատրանքի փլուզմանը ներսից: Իսկ քրդերին ձուլելու քաղաքականության արդյունքը եղավ քրդական զինված պայքարը:

Միասնական թուրքական ինքնության պատրանքն սկսեց փլուզվել մի շարք գործոն-

ների ազդեցության տակ, որոնցից հատկապես կարևորվում են հետևյալները.

ա. Քրդերի ազատագրական պայքարը խթանեց ստրկացված մյուս ժողովուրդների ազգային գիտակցության վերելքը, որին էապես նպաստեց ԽՍՀՄ-ի փլուզումը:

բ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հյուսիսատլանտյան դաշինքի շրջանակներում Թուրքիայի դերի աստիճանական նվազման հետևանքով Արևմուտքը էականորեն փոխեց իր հանդուրժողական վերաբերմունքը Թուրքիայի բազմաթիվ ներքին խնդիրների վերաբերյալ:

գ. ԵՄ-ին անդամակցելու քաղաքականությունը քաղաքական և մտավորական որոշ շրջանակների ու լրատվամիջոցների հանգեցրեց բազմաթիվ տաբուների (այդ թվում՝ ազգային-կրոնական) վերացման անհրաժեշտության գիտակցությանը: Հատկապես ԵՄ-ի ներկայացրած պահանջները՝ որպես անդամակցության պարտադիր պայման, և դրանց իրականացման ուղղությամբ կատարվող և կատարվելիք քայլերի անհրաժեշտության գիտակցությունը լրջորեն խարխլում են Թուրքիայի տոտալիտար գաղափարական ռեժիմի սասանված հիմքերը:

Այս ամենի հետևանքը եղան խոսքի, մամուլի որոշ ազատությունը, ազգային-կրոնական հարցերի և մարդու իրավունքների արծարծումը, քեմալիզմից եվրոպամետ ժողովրդավարների և կառավարող իսլամիստների աստիճանական հեռացումը և այլն: Միասնական ազգամիասնական թուրքական ինքնություն կերտելու իթթիհատական-քեմալական ծրագիրը տապալվեց. հասարակության ներքին ցնցումից գոյացած բաժանարար գծի տարբեր կողմերում, տարբեր հարթություններում հայտնվեցին ազգեր, դասակարգեր, հասարակական-քաղաքական ուժեր և, մասամբ, զինվորականության ներկայացուցիչներ: Կասկածի տակ դրվեց և անգամ ամենախիստ քննադատության ենթարկվեց թուրք քաղաքացու դաստիարակության գործում անսասան հեղինակություն ունեցող ու սրբություն սրբոց համարվող դասագրքերի բովանդակությունը. «139 դասագրքերն ուսումնասիրած (Թուրքիայի) Պատմության

հիմնադրամի և Թուրքիայի Մարդու իրավունքների հիմնադրամի պատրաստած զեկույցի համաձայն՝ դասագրքերը ռազմապաշտ, ազգայնամոլ, ոչ գիտական, կանանց հանդեպ խտրական և ռասիստական են ([www.bianet.org](http://www.bianet.org))»:


Ձեկույցում հատկապես կարևորվում է Թուրքիայի ժողովուրդների միջև օտարացման ու թշնամանքի վտանգը, որ քարոզում են դասագրքերը. «Տարբեր եղողին անտեսելն ու արհամարհելը մարդու իրավունքների նույնպիսի խախտում է, ինչպիսին բացահայտ կամ քողարկված խտրականությունը: Դասագրքերում Անատոլիայում բնակվող ժողովուրդներին կամ ընդհանրապես չեն անդրադառնում, կամ էլ հիշատակում են թշնամություն սերմանող արտահայտություններով: Դասագրքերից լրիվ պետք է զտվեն հայերի, հույների և ասորիների նման ոչ մուսուլման ժողովուրդների վերաբերյալ խտրական արտահայտությունները, պետք է վերջ տրվի այն համարումներին, ըստ որոնց՝ Անատոլիայում բնակվող քրդերի, չերքեզների, լազերի, ալևիների, արաբների պես տարբեր էթնիկական ու կրոնական խմբերը իբր «չկան» կամ էլ «վնասակար» են, դասագրքերում պետք է տեղ տրվի այն ճշմարտությանը, համաձայն որի՝ նրանք իրենց տարբեր լեզվով, կրոնով, հավատքով և մշակույթով եղել են Թուրքիայի հասարակության և ինքնության գլխավոր բաղադրիչները: Դասագրքերում միայն «մեզ պատկանելն ակնարկող ազգային արժեքները» պետք չէ բացահայտ կամ քողարկված կերպով վեհացվեն «ուրիշ» հասարակությունների և մշակույթների հանդեպ, «ուրիշները» չպետք է ստորացվեն զանազան միջոցներով, և չպետք է խրախուսվի որևէ թշնամություն: Դասագրքերում շարունակական սպառնալիքի ընկալման միջոցով ազգային ինքնության ստեղծումը, հավիտյանս հավիտենից ոչ մի ձևով չփոփոխվող «բարեկամի» ու «թշնամու» սահմանումների կամ էլ ակնարկների գոյությունն արգելք է հանդիսանում խաղաղության մշակույթի զարգացման համար: Բոլոր դասերի ժամանակ պետք է հեռու մնալ այն ակնարկից, թե Թուրքիան ամբողջովին շրջապատված է թշնամիներով, և որ



Էրդողան

մեր հայրենակիցների մի մասն էլ հանդիսանում է ներքին թշնամի (Radikal, 08. 02.09)»:

2009 թ. մարտի 16-ին Փոքրամասնությունների իրավունքների միջազգային խմբի «Մոռացնել, թե ծուլել: Փոքրամասնությունները Թուրքիայի կրթական համակարգում» վերնագրով զեկույցը մեղադրում է Թուրքիայի կրթական համակարգին՝ կրթական ճանապարհով փոքրամասնություններին «ծուլելու, թուրքական ինքնությունն ու ազգայնականությունը խրախուսել ջանալու մեջ» և կոչ անում կառավարությանը՝ «գործի անցնել՝ տարբեր մշակույթները, լեզուները, պատմություններն ու կրոններն անտեսող դպրոցներում փոքրամասնություններին պատկանող երեխաների հանդեպ խտրականությանը



Բասբըն Օրան

վերջ տալու համար ([www.bianet.org](http://www.bianet.org)):

Այսպիսի քննարկումները թուրքիայում հնարավոր դարձան 2002 թ. հետո: Արտառոց է այն իրողությունը, որ իսլամիստների կառավարման ութ տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների իրավունքների, լեզվի, մշակույթի և, հատկապես, Հայոց ցեղասպանության ու Հայկական հարցի մասին գրվել ու խոսվել է մի քանի անգամ ավելի շատ, քան նախորդ բոլոր տարիներին: Եվ սա այն դեպքում, երբ այդ թեման թուրքիայում ամենամեծ տարուն էր:

Ազգային, մարդկային, կրոնական, կրթական խտրականություններին վերջ տալու՝ եվրոմիության և այլ երկրների, միջազգային գանազան կազմակերպությունների պահանջներն ու կոչերը երկրի իշխանություններին դնում են հակասական իրավիճակների մեջ, իսկ ազգայ-

նամուլական շրջանակներին՝ մղում բացահայտ հակադարձության: Նրաք լավ են հասկանում, որ պատմական ճշմարտությունների բացահայտումը հանգեցնելու է պատմական կեղծիքի վրա խարսխված թուրք հասարակության ազգային ինքնության փլուզման: Այդ հակասականության ամենաբնորոշ դրսևորումը կարելի է համարել վարչապետ Էրդողանի վարքագիծը: Ահա մի հատված 2008 թ. փետրվարին Գերմանիայում այս երկիր գաղթած թուրքիայի քաղաքացիներին ուղղված նրա ելույթից. «Տարբերությունները հասարակության հարստությունն են: Եթե ասենք՝ ես և ուրիշները, ահա այդ դեպքում կնշանակի, որ խաղաղությունն այլևս սպառնալիքի տակ է: Չպետք է լինի օտարացման ընթրում: Մենք բացեիբաց ասում ենք՝ Գերմանիայում բնակություն հաստատած թուրքերը պետք է լավ տիրապետեն իրենց մայրենի լեզվին, անպայմանորեն պետք է լավ խոսեն նաև գերմաներեն: Ամեն դեպքում ոչ ոք իրավունք չունի պահանջելու, որ որևէ մեկը մոռանա, չսովորի իր մայրենի լեզուն: Մենք հետևյալ համոզմունքին ենք՝ «այ՛ո» ենք ասում ինտեգրացիային, բայց «ո՛չ»՝ ասիմիլացիային: Քանզի մարդիկ ուժեղ են իրենց մշակույթներով ու արժեքներով: Դա այդպես է թե՛ թուրք և թե՛ գերմանացի զավակի համար: Նրանց ուժացնել ջանալն արդեն իսկ հանցանք է՝ ուղղված մարդկությանը (Ակօս, 05. 06. 09)»:

Թվում է՝ ավելի խոհեմ խոսք չէր կարող ասել մի վարչապետ, որի երկրում անգլիական և գերմանական մասնագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ «բնակչության 37-40 %-ը իրեն թուրք չի համարում (Հայ Դատն այսօր, Թեհրան, 2005, էջ 46)», և որտեղ խոսում են 36 լեզվով ([www.ethnologue.com](http://www.ethnologue.com)): Սակայն նույն Էրդողանը այս տարվա մարտ ամսին Հաքքարիում ասաց. «Մեկ լեզու, մեկ ազգություն. ով որ չի հավանում, կթողնի-կզնա (Milliyet, 13.03.2009)», իսկ մայիս ամսին կուսակցական ժողովում արտահայտած հետևյալ մտքով զարմացրեց բոլորին. «Տարիներ շարունակ տարբեր էթնիկական ինքնություն ունեցողները քշվեցին մեր երկրից: Դա, ըստ էու-

թյան, ֆաշիստական մոտեցման արդյունք էր (Radikal, 24.05.2009)»: Այս մտքերից ո՞րն է հոգեհարազատ էրդողանին. կարծում եմ՝ երկրորդը, քանզի եթե այս խոսքերը զարմացրել են Բասքըն Օրանին (և բոլորին), ապա բոլորովին զարմանալի չէր, երբ էրդողանը դրանից մեկ շաբաթ առաջ Լեհաստանում, խոսելով Թուրքիայում աշխատող 40 հազար հայերի մասին, անկեղծացավ. «Դրանց, եթե պետք լինի, հետ կուղարկենք (Milliyet, 15.05.09:)»: Այն, որ վարչապետի ժողովրդավարական նկրտումները այլ նպատակներ են հետապնդում, Թուրքիայում գիտեն շատերը՝ թե քաղաքական ուժերը, թե բանակը, թե լրատվական միջոցները և այլն: Ժողովրդահանրապետական կուսակցության ներկայացուցիչ Օնուր Օյմենը հետևյալ կերպ արձագանքեց էրդողանի խոսքերին. «Չհասկացա՝ վարչապետն ինչ ցանկացավ ասել: Երբեք չենք լսել, թե մարդիկ վտարվեն մեր երկրից իրենց էթնիկ ծագման պատճառով: Ոչ մի վարչապետի չի սազում տեղի չունեցած իրադարձությունները որպես կատարված դեպքեր ներկայացնելը (Taraf, 25.05.09)»: Իսկ Ազգայնական շարժում կուսակցության անդամ Օթթայ Վուրալը զգուշացրեց. «Չլինի՞ թե կարոտաբաղձություն էք զգում Սևրի Ժամանակաշրջանի հանդեպ: Այս ազգն իր պատմության և ոչ մի փուլում ցեղապաշտ չի եղել: Վարչապետը խոսել է Օրհան Փանուկի լեզվով (Radikal, 26.05.09)»:

Նման հակասական հայտարարությունների և գործելակերպի բացատրությունը թաքնված է Թուրքիայի դիմագրաված մեծագույն վտանգի մեջ, որի մասին պարբերաբար հրապարակումներ են լինում հատկապես ազգայնամուլ մամուլում: Այդ վտանգի անխուսափելիությունը լավագույնս զգացողներից է հայտնի ազգայնամուլ և այլատյաց Մեհմեդ Շևքեթ Էյզին. «ԽՍՀՄ-ում տեղի ունեցած պերեստրոյկայից հետո Խորհրդային Միությունը փլուզվեց: Մեզ մոտ նույնպես այս պահին շատ խորը պերեստրոյկայի քամին է փչում: Ի վերջո մեր երկրի մասնատումը ցանկացող երկրները կարող են հասնել իրենց նպատակին: Մի՛ տրվեք



Օթթայ Վուրալ

այն անիրագործելի և մանկական երազանքներին, թե «Վա՛խ, Մոսուլն ու Քերքուքն էլ են մերը լինելու»: Եթե կարողանանք մեր ձեռքում գտնվող Թուրքիան պահպանել, մեզ համար դա էլ մեծ բարիք կլինի... 1923 թ. կնքված Լոզանի պայմանագրի գաղտնի արձանագրություններով կորցրեցինք մեր իրական ազատությունը, անկախությունն ու ինքնությունը: Այնուամենայնիվ Անատոլիայում և փոքրիկ Թրակիայում, թեկուզ և արտաքուստ, բայց պահպանեցինք ամբողջականությունը: Հիմա գտնվում ենք այն ևս կորցնելու վտանգի առջև (ընդգծ.՝ Յ.Ա) (Milli Gazete, 31.07.09)»:

Արտաքին ամբողջականության կորուստի վտանգի պատճառը անշուշտ ներքին ամբողջականության (միասնական թուրքական ինքնության) չգոյությունն է, որքան էլ Ազգային պաշտպանության նախարար Վեջդի Գյոնյուլը համոզված լինի, որ «Եթե հայերին, հույներին



Էրգուն Բաբահան

չարտաքսեինք, չէինք կարողանա ազգային պետություն դառնալ ([www.sagduyu.de](http://www.sagduyu.de))»:

Այս մտայնության կրողները տասնամյակներ շարունակ այլ ժողովուրդներ ոչնչացնելու և տեղահանելու միջոցով են ստեղծել ժամանակակից Թուրքիան՝ թուրք հասարակությանը սերնդեսերունդ ներարկելով այդ ժողովուրդների՝ դավաճան, անհավատարիմ ազգ լինելու համոզմունքը: Այսօր, երբ քեմալական Թուրքիայի կազմակերպական ու գաղափարական շենքը տալիս է առաջին ճաքերը, ակնհայտ է դառնում, որ Թուրքիայի իշխանություններին չի հաջողվել ամբողջությամբ իրականացնել իրենց առջև դրված թիվ մեկ խնդիրը՝ Թուրքիայում բնակվող ժողովուրդների ձուլումը՝ թրքացումը: Տասնամյակներ շարունակ հմտորեն ու խնամքով թաքցրած միասնական ինքնության խաբկանքի բացահայտումը նորանոր հարցեր


է առաջադրում. ինչպե՞ս, որտեղի՞ց հայտնվեցին մյուս ժողովուրդները՝ իրենց իրավունքներով, կրոններով, լեզվով ու մշակույթով, ինչո՞ւ այդ մասին նախկինում հասարակությունը տեղյակ չէր: Հանրահայտ ազգայնամուլ Յուսուֆ Գեզգինը նույնիսկ սարսափով արձանագրում է, որ «...հիմնական տարր ենթադրվող թուրքերը (սև թուրքերը) այս ազգային պետության մեջ (Թուրքիայում) չունեն խոսքի իրավունք: ...հենց նրանց հետ են ամենից վատ վերաբերվում, բոլորից շատ հենց նրանց կրոնական, ազգային, մշակութային արժեքներն են ոտնահարվում»: Եվ դա այն դեպքում, երբ «Անատոլիան ոչ մի ժամանակաշրջանում չի հասել նման համամասնությամբ թուրք և մահմեդական բնակչության: Բայց միևնույն ժամանակ թուրքերն իրենց հիմնադրած ոչ մի պետության մեջ չեն եղել այդչափ անզոր և ոչ ազդու: Թուրքերի հիմնած բազմաթիվ պետություններում թուրքերը մեծամասնություն չէին կազմում, բայց ազդեցիկ էին ու ղեկավար ([www.sagduyu.de](http://www.sagduyu.de))»:

Ազդեցիկ ու ղեկավար թուրքի տեսակի («սև թուրքերի», այսինքն՝ էթնիկ թուրքի- Հ.Ա.) միահեծան իշխանության թուլացումը այլ ժողովուրդների զարթոնքի համապատկերում, որ այլապես նշանակում է ազգերի ու մարդկանց իրավահավասարության պահանջ, թուրք ազգայնամուլության համար պարունակում է մեկ իմաստ. Թուրքիայի մասնատում ու ոչնչացում: Ժողովրդավար Թուրքիայի մոտիկ հեռանկարով խանդավառված իդեալիստներին արժե հիշեցնել թուրք մտավորական Էրգուն Բաբահանի մտահոգությունը թե կասկածը. «Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թուրքիան դարձել է մեջտեղից երկուսի բաժանված մի երկիր, ինչպես նաև՝ այս ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ մեր երկիրն ունի շատ կարևոր մի խնդիր՝ թուրքական հարցը: Չգիտեմ՝ հնարավոր է արդյոք նորմալ մարդ դարձնել նրանց, ովքեր զգվանք են տածում իրենցից տարբերվողների հանդեպ, չեն կարողանում հաշտվել այդ հանգամանքի հետ: Սակայն գիտեմ, որ հեշտ չէ ժողովրդավարություն

արմատավորել մի երկրում, որտեղ կան հանրութողականությունից այսքան զուրկ և այսքան զորեղ մարդիկ (Էրզուրն Բաբահան, Star,06.06.09)»:

## Հակահայ քարոզչություն


Միատարր երկիր ստեղծելու երիտթուրքերի ծրագիրը հանգեցրեց հայերի, հույների և ասորիների ցեղասպանության, որը մերթ երիտթուրքական ոճով, մերթ սպիտակ երանգավորումներով շարունակվեց քեմալականների ու նրանց հետևորդների կողմից՝ այս կամ այն չափով տարածվելով նաև մոտ 50 այլ ժողովուրդների վրա: Այսօր, երբ պարզվում է, որ այդ ծրագիրը տապալված կամ կիսատար է, արդյո՞ք ազգայնամուլների ուղեղներում երրորդ ցեղասպանության ծրագիրը չի խմորվում: Հարցադրումը չափազանցություն չի թվա, եթե թեկուզ հպանցիկ ծանոթանանք ազգայնամուլների գաղափարներին և բացահայտ կամ գաղտնի (խորքային) գործելաոճին: Ինչպես նախկինում երիտթուրքերը, այժմ էլ սրանք փորձում են կերտել ներքին ու արտաքին թշնամիների կերպարներ՝ թուրք հասարակությունը համախմբելու և սրբազան պատերազմի առաջնորդելու համար: Այդ մարդիկ, որ կայացած բացահայտ կամ գաղտնի ազգային, պետական, քաղաքական, ռազմական և գաղափարական ոլորտի գործիչներ ու տիրական դեմքեր են՝ օժտված նյութական, վարչական, քաղաքական ու ռազմական մեծ կարողություններով, երիտասարդ սերունդներին իրենց հետևից տանելու համար ծրագրված ու համակարգված լայն գործունեություն են ծավալում. «Ականատես ենք լինում, որ ամենաընտիր համալսարաններն անգամ կրթում են «ուրիշի» նկատմամբ թշնամական զգացումներ տածող, սպանությունը սրբացնող, ֆաշիզմի հակված մտայնություն ունեցող մարդկանց: Ֆաշիստական, քանի որ չի ճանաչում «ուրիշի» ապրելու իրավունքը: Եթե իր ձեռքում լինի, ինչպես 1915 թ., կաքսորի, հեռու կքշի այս հողերից գլխաշոր կրողին էլ, քրդին էլ (Էրզուրն Բաբահան,



Մեհմեդ Շևքեթ Էյզի

Star,06.06.09)»: Ինչպես տեսնում ենք, 1915 թ. կրկնության վտանգի զգացումն ունեն նաև որոշ թուրք մտավորականներ:

Իսկ ովքե՞ր են այդ մարդկանց թշնամիները. «Կրիպտո հայերը, նրանց գլխավոր աջակից հույն փոքրամասնությունը և վերնախավի ատելի ներկայացուցիչները: Վերջիններից կազմված մեր կաստան, անշուշտ մեր ներքին քաղաքական հաստատությունները, գաղտնի միությունները, մեր պետության ու պաշտոնական անդամների մեջ կազմակերպված ներքին տմարդիները: Այսինքն՝ Հայաստանը, Հունաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան և ԱՄՆ-ը՝ շողկապված կերպով, թուրքի, Թուրքիայի և իսլամի թշնամիներն են... բոլոր անհայտ հանցագործների, անարխիստների, ահաբեկչության, մարդասպանության, ոճրագործների և նրանց բոլոր նախածեռնությունների



ետևում, անկասկած, կանգնած են հունական ու հայկական կազմակերպությունները: Քանզի նպատակն ու սպասումը շարունակաբար կառուցվել է թուրքի և թուրքիայի հանդեպ թշնամության, արյան, վրեժխնդրության ու ատելության վրա (Յուսուֆ Գեզզին [www.sagduyu.de](http://www.sagduyu.de)):

Թուրքիայի ազգայնամուլ մամուլը հեղեղված է այս կարգի հրապարակումներով, որոնց քարոզած գաղափարները խոր արմատներ են գցում հասարակության մեջ: Թուրք հասարակության այլամերժական և, հատկապես, հակահայկական տրամադրություններն այնքան են սրված, որ 500 հազար բնակչություն ունեցող Կեսարիայում տեղի ունենալիք Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային խաղի անցկացման դեմ ապրիլ ամսին կազմակերպված ստորագրահավաքին 15 օրում մասնակցեց 250 հազար մարդ.

ստորագրահավաքի արշավն անցնում էր «Չեմ ուզում իմ քաղաքում տեսնել ադրբեջանցի եղբորս դահիճներին» նշանաբանով և սահմանը չբացելու պահանջներով:

Տասնամյակներ շարունակ, Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Թուրքիայի այլ վայրերում (բացի Ստամբուլից) հայերի գոյությունը ժխտող թուրքական իշխանությունները, քաղաքական ուժերը, մամուլը, մտավորականները, ամենատարբեր պետական ու ոչ պետական հաստատությունները վերջին 8-10 տարիներին ջանք չեն խնայում ամենուր ծափոյալ հայեր հայտնաբերելու գործում: Բացի ստամբուլաբնակ 50 հազար հայերից՝ «Այսօր Անատոլիայում... ենթադրվում է, որ գոյություն ունի 500 հազարից մինչև մեկ ու կես միլիոնի միջև տատանվող հայ ազգաբնակչություն: Այս հատ-

վածի մի մասն իրոք մահմեդական է դարձել և լուծվել թուրք ու քուրդ հասարակության մեջ: Բայց նշանակալից չափով հայեր ծպտյալ վիճակում պահպանում են հայկական ինքնությունն ու կրոնը: Այսօր այս հատվածի զավակները հասարակության մեջ շատ ավելի ազդեցիկ են, քան բացահայտ հայերը: Իրենց ծննդավայրն ու անունները փոխելուց հետո մեծ քաղաքներ եկած ծպտյալ հայերը շատ ներգործուն են բյուրոկրատիայի ամենաստրատեգիական կետերում, ինչպես նաև՝ արվեստի և ՋԼՄ-ների աշխարհում (տե՛ս նախորդ հոդումը)»:

Այն, որ Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի ողջ տարածքում կան հայեր, որոնք Ցեղասպանությունից փրկվածների սերունդներն են, հասկանալի է և օրինաչափ: Նրանց թիվն էլ հարցի մեկ այլ կողմն է. ես հակված եմ այն կարծիքին, որ այդ թիվը գոնե կրկնակի շատ է (բացահայտ քրիստոնյա և հայախոս հայեր, Ցեղասպանության ժամանակ և դրանից հետո իսլամացած հայեր, ծպտյալ հայեր, շատ ավելի վաղ իսլամացած համշենահայեր և այլն, ԴՐՕՇԱԿ, 2009, թիվ 1, էջ 33-38): Բայց այստեղ հետաքրքիրն այն է, որ թուրքական ազգայնամուլ մամուլն ու քաղաքական-մտավորական շրջանակները այդ թիվը մեծացնում են աստիճանաբար՝ ըստ հակահայ քարոզչության քաղաքական նպատակահարմարության:

Երբ տարբեր երկրներ իրար հետևից սկսեցին ճանաչել Հայոց Ցեղասպանության փաստը, որոշ թուրք պատմաբաններ զոհերի թիվը փոքրացնելու համար սկսեցին փրկվածների ավելի մեծ թվեր ներկայացնել: Այսօր դրան ավելացել է մեկ այլ քաղաքական պատվեր. ամեն կերպ փաստել, ապացուցել, որ հայերը Թուրքիայի ամբողջականությանն ու պետության անվտանգությանը սպառնացող ուժ են. վտանգի չափը մեծացնելու համար հարկավոր է շրջանառության մեջ դնել ավելի մեծ թիվ՝ մեկ և կես միլիոն. «Մեր երկրում գոյություն ունի ուժեղ և ազդեցիկ մի հատված, որին անվանում ենք «կրիպտո օտարերկրացի»»: Սրանք թուրք-մահմեդականի պատյանի մեջ պարուրված, իրենց իրական ինքնությունը թաքցնող, ատելությամբ ապրող,

կարևոր պաշտոններ գրավելով՝ մեր ազգի զավակների համար դեպի պաշտոններ տանող ճանապարհը փակող անձինք են: Ծպտյալ օտարերկրացիների մի կարևոր հատվածն էլ կազմում են հայերը: Եթե անգամ ոչ սաբաթայականների չափ, այնուամենայնիվ կրիպտո հայերը շատ ազդեցիկ են Թուրքիայում: Իրենց նախկին ախտյանները հանդիսացող սաբաթայականների հետ համերաշխ են սև թուրքերի հարցում: Այսօր բանակից մինչև դատական համակարգ, արվեստներից մինչև քաղաքական դաշտ՝ ամենուր, իրենց գիտակցությունն ու ատելությունը պահպանող բազմաթիվ ծպտյալ հայեր կան: Կառույցներից մեկն էլ, որում բավականին մեծ թիվ են կազմում կրիպտո հայերը, մեր ազգի գլխին մութ խաղեր խաղացող, սադրանքներով մեր մարդկանց իրար դեմ հանել ձգտող, ամեն տեսակի հանցագործություն կատարող էրզեմեքոն ահաբեկչական կազմակերպությունն է (Յուսուֆ Գեզզին, [www.aktifhaber.com](http://www.aktifhaber.com))»:

Հայերից եկող վտանգն այնքան մեծ է, որ «մոռացության» է տրվում անգամ քրդական վտանգը: Ավելին՝ պարզվում է, որ քուրդ ժողովուրդը նույնպես վտանգված է. «Իսկապես ասած՝ **քրդերը, որպես այս ազգի զավակներ**, քրդականություն չեն արել անգամ պետության ղեկավար շրջանակներում: Միայն հայ կան այլ ազգության պատկանող դրոնմեններն են շահարկում ու չարաշահում քրդերին: ... Նրանց գործողությունները տանում են մասնատման և տարրալուծման (ընդգծ.՝ Հ.Ա) (Սեյֆի Շահին, [www.ortadogugazetesi.net](http://www.ortadogugazetesi.net))»: Իսկ որոշներն էլ սպասում են «...այն ժամանակվան, երբ զարթոնք կապրեն միմյանց դեմ թշնամացված ու հրահրված (հայ կան այլ ազգության պատկանող դրոնմենների կողմից-Հ.Ա.) քրդերը և թուրքերը... ( [www.aktifhaber.com](http://www.aktifhaber.com))»:

Երևում է՝ 1915-23 թթ. քրդերի ձեռքով հայերին կոտորելու քաղաքականությունը կարոտախտ է ծնել ֆաշիստական ուղեղներում նրանք դեռևս մի քանի տարի առաջ հայ օժեցին Օջալանին ու նրա բազմաթիվ զինակիցների: Երբ այս տարբերակը չտվեց ցանկալի արդ-



Վելի Քյուլջյուբ

յունքը, քանի որ բազմամիլիոն քուրդ ժողովրդի պայքարը որպես հայկական գաղտնի դավադրություն ներկայացնելը այնքան էլ համոզիչ չէր հնչում, ասպարեզ նետվեց նաև Երզնեքոնի հայ-հրեական ծագման վարկածը: «Չի երևում, թե հայերը Երզնեքոնի ուղեղն են ներկայացնում, սակայն եթե հայացք ենք նետում գործ անողներին, սադրանքներ հրահրողներին, բացահայտվում է, որ դրանք հիմնականում բոլորն էլ (կրիպտո) հայերն են: Խորքային գործերում հայերը օպերատորներն ու կատարողներն են, իսկ հայերից ավելի սպիտակ եղող հրեաները և սաբաթայականները նկատվում են որպես որոշումներ կայացնողներ... Այսօր ռազմավարական նշանակություն ունեցող կետերում բազմաթիվ ծախյալ հայեր ու սաբաթայականներ կան»:

Երզնեքոնի պարագլուխներից Վելի Քյուլջյուբը հայ է, «...քանի որ նրա համախոհների տված ցուցմունքներում նշվել է, որ Վելի

Քյուլջյուբը հայերեն է խոսում իր մայրենի լեզվի պես, ապա հարց է ծագում. Երզնեքոնի գործում տեղ գտած Վելի Քյուլջյուբը որտեղի՞ց և ինչպե՞ս է սովորել հայերեն»: Պարզվում է՝ սա խիստ մութ անցյալ ունի. պետական պաշտոնի եղած շրջանում նրա հրամաններով հազարավոր թուրքեր ու քրդեր են իրար սպանել. «Վելի Քյուլջյուբը հմտորեն օգտվել է բոլոր միջոցներից, որպեսզի տվյալ շրջանի մարդկանց թշնամի դարձնի թուրքին ու թուրքական պետությանը, այն էլ՝ հանուն «պետության» և «թուրքականու-թյան»...

Չայեր են բոլոր այն ռեկտորները, ովքեր Երզնեքոնի կազմակերպության «միջամտող» շրջապատ ստեղծելու համար շիկացնում են մթնոլորտը»:

«Եթե կցանկանաք, քննենք Երզնեքոն կազմակերպության մեկ այլ կարևոր դերակատարի հարցը: Իսկ ո՞վ է Բանվորական կուսակցության առաջնորդը եղած, Ափոյին ծաղիկ մեկնած, բազմաթիվ սադրիչ իրադարձությունների պարտադիր կերպով մասնակցած, պրովոկացիոն հողվածների հեղինակ, մաոյիզմի և Չինաստանի կողմնակիցը լինելով հանդերձ Ռուսաստանի, Ալեքսանդր Դուզինի հետ գործ բռնած, բայց իրականում, ըստ տեղեկությունների, Անգլիայի շահերին ծառայող, վերջին շրջանում պանթուրքիստ-ազգայնամուլ-ռազմապաշտ դարձած, այս պահին Երզնեքոնի գործով ձերբակալված Դոդու Փերինչեքը: Դոդու Փերինչեքի ընտանիքը ծագում է Երզնեքոնի հանգի Էղին (Քեմալիյե) գավառի Ափչաղա գյուղից»: Պարզվում է՝ այդ գյուղի բնակիչ բոլոր Փերինչեքները, ըստ արխիվային վավերագրերի, հայեր են՝ Դոդու Փերինչեքի նախնիները:

Եվ որպեսզի ոչ մի կասկած չհարուցի ասվածը, հարկավոր է, որ այն ցնցող հայտնագործություն լինի, մանավանդ որ դրան չհավատալու ոչ մի բարոյահոգեբանական խոչընդոտ չկա. «Իր երկրին հավատարիմ, հայկական սփյուռքի հետ խնդիրներ ունե-



Դոդու Փերինչեք

ցող, բացահայտ հայ Հրանտ Դինքի սպանությունը մտահղացած՝ Էլազիգի Քարաքոչան գավառից Երիսան Թունջելիի արմատները նույնպես հայկական են: Ինչպես երևում է՝ որպես ամենաազգայնական, ամենաազգայնամոլ հանդես եկող էրզենեքոնցիները ծագումով ո՛չ թուրք են, ո՛չ էլ մահմեդական (Յուսուֆ Գեզգին, [www.aktifhaber.com](http://www.aktifhaber.com))»:

Նման քարոզչության դեմ հանդես եկող մի շարք թուրք մտավորականներ ու գրողներ կան ստիպված հեռացել են երկրից, կան բանտերում են: Նույն ճակատագիրն է սպասում նրանց, ովքեր դեռևս ազատության մեջ են և համոզված են, թե Թուրքիայում կարելի է կառուցել «Մի նոր աշխարհ՝ ոչ մահմեդականների հետ (Ալի Բուլաչ, Zaman, 20.07. 09)»:

Հաշվի առնելով թուրք հասարակության մեջ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը և Օսմանյան Կայսրությունից ժառանգություն մնացած ցեղապաշտական-պանթուրքիստական տեսլականը՝ ավելի հավանական է կարծել, որ Թուրքիայում դեռ շատ երկար տիրապետող դիրքեր կունենան այն ուժերը, որոնք ստեղծված իրավաճակի վերլուծությունից հանգել են հետևյալ եզրակացությանը. «Հասել է ժամանակը, որպեսզի մեր երկրին, քաղաքակրթությանը և ազնվական ժողովրդին ուղղված թշնամական նախագծի, ծրագրի, սցենարի ու գործողությունների, օրինական կամ անօրինական կողմ հանդիսացող բոլոր միությունների, կազմակերպությունների, պետությունների



Հրանտ Դինյան

և կառավարությունների դեմ «բացահայտ դիրք» բռնենք և նման ու փոխադարձ քաղաքականության հետևենք (Մուստաֆա Նևրուզ Արնաջը, [www.anayurtgazetesi.com](http://www.anayurtgazetesi.com))»:

Իսկ այդ «թշնամական նախագծի, ծրագրի, սցենարի ու գործողությունների» հեղինակների ու դերակատարների մեջ, ըստ առավել տարածված տեսակետի, Հայաստանն ու հայությունը առաջիններից են. «Ովքե՞ր են ցանկանում Թուրքիայի մասնատումն ու կործանումը. Հայաստանն է ուզում, սփյուռքահայերն են ուզում: Երբեք մի՛ գայթակղվեք ու խաբվեք նրանով, որ մեր նախագահը ֆուտբոլային խաղը դիտելու նպատակով այցելեց Երևան: Հայերը մեզանից հող են պահանջում, փոխհատուցում են պահանջում, կրկին Թուրքիայում ապրելու թույլտվություն են ուզում: Նրանք ևս չեն ցանկա-

նում, որ Թուրքիան հզոր լինի: Ուզում են, որ Թուրքիան մասնատվի, որ իրենց ձգտումներն իրականանան» (Մեհմեդ Շևքեթ Էյզի, Milli Gazete, [www.mehmetsevketeygi.com](http://www.mehmetsevketeygi.com)):

Նման քարոզչության արդյունքները արտացոլվում են Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպության՝ 2009 թ. կատարած հարցախույզի տվյալներում. «Թուրքիոյ թշնամի նկատուող երկիրներուն մէջ Միացեալ Նահանգներ կը գրաւէ պարագլուխի դիրքը (25.4 առ հարիւր), Իսրայէլ (15.6 առ հարիւր), Ֆրանսա (12 առ հարիւր), Հայաստան (10.3 առ հարիւր), Յունաստան (7 առ հարիւր), Ռուսիա (6.4 առ հարիւր) և Գերմանիա (1.8 առ հարիւր): Ըստ 2005ին կատարուած հարցախոյզի արդիւնքներուն, մասնակիցներուն 6 առ հարիւրը Հայաստանը թշնամի երկիր կը նկատէր, իսկ 2.8 առ հարիւրը՝ Ռուսիան: Հարցախոյզը կատարուած է Պոլսոյ, Անգարայի, Իզմիրի և Պուրսայի մէջ (Ասպարէզ, 25. 08. 2009)»:

Եթե այսպիսի քաղաքներում, ուր գտնվում են մտավորական կենտրոնները, առավել ազատական կամ ժողովրդավարական հաստատություններն ու լրատվամիջոցները, Հայաստանը թշնամի համարողների թիվը 5 տարում գրեթե կրկնապատկվել է, ապա Կեսարիայում կատարված ստորագրահավաքի մասնակիցների թիվը՝ 250 հազար, ինչը բնակչության 50 տոկոսն է, ամբողջ Թուրքիայի հաշվարկով ներկայացնում է առավել իրական պատկերը:

Իսկ մինչ այդ «բացահայտ դիրքի» կողմնակիցներն այսօր Ստամբուլի (հնարավոր է՝ նաև այլ քաղաքների) քրիստոնյաների և, հատկապես, հայերի տների վրա խաչի նշաններ են գծում (Ասպարէզ, 19. 08. 09), ճիշտ այնպես, ինչպես Օսմանյան Կայսրությունում «զտումների» նախօրյակին, ինչպես հանրապետական Թուրքիայում՝ 1955 թ. սեպտեմբերյան հակահայ և հակահույն բռնարարներից առաջ...

„Droschak“  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienn.



Adresse:  
RÉDACTION DU JOURNAL  
„Droschak“  
GENÈVE (Suisse)

## «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳՆԱՆՎՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԹՈՒՐԹԻԱ  
(հասուած)

Օսմանեան յեղափոխութեան խանդավառութենէն յետոյ հակազդեցութիւնը բաւական զգալի եղաւ: Հին սուլթանը գերութեան մէջ իր ոճիրները կը յօրանջէ, նոր սուլթանը, երբ աչքերը կը բանայ իր շուրջը կը տեսնէ աւերածութիւն ու սուղ միայն: Լաւ տեսնողութիւններով օժտուած Մեհմեդ Ե., բռնադատութեան հին գոհ մը, կը ցանկայ իր երկրին բարօրութիւնը և կը սիրէ, գոնէ, առանց ներգործական դերակատար մը ըլլալու, համակրելի և բարի համբաւ մը ձգել, զգալով թէ դժբախտ երկիրը մէջ ունի արտի մարդիկներու՝ անգործութեան արիւնքաթ հետքերը անհետ ընելու համար:

Երկրին գերագոյն իշխանութիւնը, ըստ երեւոյթին, Խորհրդարանին ձեռքն է. բայց եւրոպայի Իթթիհասը ինքն էր որ վերին հսկողութիւնը կատարեց իրենուն և մարդոց վրայ, երկրին սահմանադրական աղաւթը վրայ տեսնողութեան մտաւորութիւնով: «Պետութեան մէջ յետեւին մը» ըսեցաւ Իթթիհասի մասին, բայց ինչքան ալ այդ ազդեցութիւնը քննադատելի ու սարսափեց կողմեր ունի, և խոյլ տալու տեսնողութեան երկրին վարչական, օրէնդրական և այլ մարմիններուն միջոց, սակայն սագնադարից բողոքներուն կրցաւ դրութիւնը փրկել: Իր հմայքը և կազմակերպութիւնը անհրաժեշտ էր այս փոխանցական օրօշմանին, որ հինի և նորի ոյսերիմ ճակատամարտը կը բարձրանար: Այդպիսի կազմակերպութիւնները, սակայն, իրենց գոյութիւնը և հմայքը կը դադարէր, երբ կառավարութիւն միայն արդարութեան և երկրին բարձրագոյն օրէնդրական և չարաչար չգործածելով իրենց բարոյական ազդեցութիւնը

չեն իյնար կամայական յաւակնութիւններու ու ծայրայեղութիւններու մէջ և չեն դատարարութեան թեմաներուն մը, փոխանակ կուսակցական ազատ և լուսաբեր դաշնակցութիւն:

Թիրքի սահմանադրական կարճատեւ օրօշման մէջ ներքին և արտաքին տեսակետով յուզումնալից օրօշման մը բոլորեց: Պոստա-Հերի միջադէպը, Պալանտեան բարդութիւնները, փափուկ կացութիւն մը ստեղծեցին իրեն համար. սակայն եւրոպական մեծ տեսլականները իրենց հօր և օտարացի դատարարութիւնը ընդհանրեցին փրկելու համար նորածին սահմանադրութիւնը որ «օգտակար դիտարկ» Թիրքի բոլոր ժողովուրդներուն:

Թիրքերը յաջողեցան, ընդհին Եւրոպայի համակրութեան, արգիլել, գոնէ առժամապէս, գրեթէ կատարած իրողութիւն մը, այն է Կրեմլի Յունաստանի միացումը: Այս միջադէպը առիթ կամ դատարար մը եղաւ Թիրքի՝ անգամ մըն ալ վախ ազդել անկազմակերպ Յունաստանին, և անուղղակիօրէն սմեցնել Թիրքի յոյները որ, ըստ փրկութեան, չէին ծածկել իրենց ազգայնական յոյսերսանքները: Կրեմլն այն փափուկ հարցն է, խոսքերով լեցուն միտք առկա ու անլուծելի, որ անակնկալներ կը վերադառնէ Արեւելի համար: Սակայն արաբական ու ալբանական աղաւթներուն, որ անվերջ և սղախնալից կըլլան հետզհետէ, կը կաշկանդեն երկրին խաղաղ զարգացման նախապայելը և կստիպեն անկարելի զոհողութիւններ ընել:

Այդ բարձրագոյն մտք կը մնան իրենց բարձրագոյններուն մէջ, ինչ ալ ըլլան անոնք, արտաքին դրոյն, յետադիմական կամ ազգայնական բարձրագոյն, սա կէտը որո՞ւն է, այդ բարձրագոյնները քննադատեն, այնքան կը շեշտեն ցեղական կամ ազգային ոգին: Ժամանակաւոր գաղութները չարիքը չեն մարտ, այլ կանթեղեն: Կառավարութեան փառաբանական իմաստութիւնը միայն դիտարկ կրնայ բանաւոր լուծումը տալ այդ կարգի հրատարակութեան:

Խորհրդարանը իր սկզբնական մեղաւորութեան ամիսներուն մէջ խանդավառ էր, անէ՛ծք ու անթ կը տեսնէր երկրի աւերիչներու և բռնաւորներու գլխուն: Ապրիլ 13-ի հարածէն յետոյ, անսպասելի

վսանգներու մտաւորութիւնով՝ վերադառնալի դիրք կը բռնէ և զիջող և յարմարող կը դառնայ:

Խորհրդարանին մէջ ընկերական մեծ հարցեր չյուզեցան և եթէ այդ, անոնք ջորի մէջ դաւոյնի հարածներ եղան: Օսմ. յեղափոխութիւնը ամեն բան «հորիչ»-ազատութիւն բառին սակ կը դարձնէր, առանց որոշարկելու անոնց սարքերը: Թիրքերը, որ մեծամասնութիւն էին, ընդհանուր հարցեր լուծելէ առաջ «սիրող ցեղին դիրք» կուզէին փրկել: Թիրք ժողովուրդին յետադիմ վիճակը, կրօնական մոլեռանդութիւնը, կը թելադրէին քիւրդ մեծամասնութեան, կամ անոնց դեկավարներուն, սահմանադրական ազատութիւնը ձեւել աւանդական դաշնակցութեան վրայ և նոյնիսկ բռնադատել անոր ոգին: Երկրաբան սահմանադրութեան դէմ կը դառնար և իսլամական օրէնքը, սովորութիւնը, բարքերը կը դադարեցնէ իրենց որոյն իրաւունքները: «Մենք Եւրոպայէն կրնանք առնել ինչ որ կը համադաստիսանէ մեր Երկրաբան ոգուն», կըսէր երեսփոխան իւստի մը: Երկրաբան սկզբունքը քաղցր համար համոզմունք մըն է, քաղցրուն համար դատարարական մը, սահմանադրութեան էութեան խառն ուղղութիւն մը տալու համար: Կամ սահմանադրութիւնն զենք մըն էր հոգաւոր ազգութիւններու իրաւունքները կաշկանդելու, իսկ Երկրաբան անուղղակի միջոց մըն էր սիրող ցեղին գերակշռութիւնը աղաւթելու համար: Սահմանադրութիւնը այսպէս երկդիմի և երկաւորի բնատրութիւն կատարար և կիյնար cercle vicieux-ի մը մէջ:

Արդիւնաւոր և կոտորածներուն մը չէր կարելի սղախել Խորհրդարանէ մը, որ ժամադրած էին երկրին անփորձութիւնները, և որոնցմէ փոքրամասնութիւնը միայն քիչ քան ծանօթ էր իր երկրի ներքին ու արտաքին դաշնակցութեան և նոյնիսկ աշխարհագրութեան: Իր գործունէութիւնը խօսքի և ծրագրային օրօշմանը դէմ չէր բոլորած: Երկրին աղաւթութեան ու հաղորդակցութեան սարքական և երկրական հարցերը լուծելու և նոյնիսկ լուծում չեն ստացած բոլորովին:

Օսմ. սահմանադրութիւնը ոչ միայն չբանաւորեց մեծ սկզբունքներ, այլև մաքաւեցաւ կարգ մը համաշխարհային հարցերու դէմ. փեւրկեց օրէնքներ մամուլի ազատութեան, փառաբանական ընկերակցութիւններու, գործադրողի, գումարումներու, կրթական ազատութեան դէմ. այսպէս՝ սահմանադրութիւնը ուրականային և թլփաս կերպարան մը կատարար:

Քաղաքներու կախարդանքը  
Ա. Պօսթընեան պատկերներ  
Անթիլիաս, 2008, 400 էջ

ՄԱՐԶՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ

ԵՌԱՄԱՍ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ա.

ՊՕՍԹԸՆԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԸՆԹԻԼԻԲՍ  
2008

## Մարգպետ Մարկոսեան

Ինչ-որ տեղ կյանքի պատմություն, ինչ-որ տեղ գիտնականի խոհական տեսակետ, ինչ-որ տեղ նորանոր զգացողությունների ու ընկալումների դիմակայություն, բայց իր ամբողջության մեջ Չայ սփյուռքի մի համապատկեր է Մարգպետ Մարկոսյանի «Քաղաքների կախարդանքը» գրքի Ա հատորը, որն ըստ էության տարբեր տարիների հայկական պարբերականներում («Նաիրի», «Սփիւռք», «Նոր Կեանք», «Յառաջ») հրատարակված, ինչպես նաև այսու առաջին անգամ ընթերցողին ներկայացված հոդվածների եւ ակնարկների ժողովածու է: Գրքի Բ եւ Գ հատորները կամբողջացնեն «Քաղաքներու կախարդանքը»՝ ԱՄՆ-ի հայաշատ մյուս քաղաքների՝ Նյու Յորքի եւ Լոս Անջելեսի պատկերներով՝ իրենց հետ ամբողջացնելով նաև ամերիկահայության հասարակական, ազգային ու քաղաքական խնդիրները:

Լինելով գիտնական եւ աշխատելով ամերիկյան ճանաչված գիտական հաստատություններում՝ Մ. Մարկոսյանը շատ-շատերի պես անտարբեր չի դարձել սփյուռքահայության խնդիրների հանդեպ: Ընդհակառակը՝ ձգտել է վեր հանել դրանք, ներկայացնել, հնչեղություն հաղորդել դրանց ու լուծումներ առաջարկել: Խորաթափանց հայացքով նա նկատում է ամերիկյան հասարակության մեջ խոր արմատներ նետած այն բոլոր երեւոյթները, որոնց ազդեցության կրողն է դառնում նաև այդ երկրում հայտնված հայությունը, ում համար նախապես խորթ է եղել այդ ամենը:

Ամերիկյան բարքերի հետ առաջին ծանոթությունը ծանր է տարել նաև ինքը՝ հեղինակը, ով գիտությունների դոկտորի կոչում ստանալու նպատակով Բեյրութից հայտնվում է Փենսիլվանիայի նահանգի համալսարաններից մեկում: Ահա թե ինչպես է նա ներկայացրել ծննդավայր Բեյրութի եւ Բոստոնի տարբերությունը. «Պէյրութի մէջ ընկերներ, ընտանեկան պարագաներ կը պաշտպանեն անհատը, կը մեղմեն անակնկալներու դառն փորձանքները, ու ձեւով մը մարդ կը յաջողի իր հաւասարակշիռ ինքնավստահութիւնը: Պօսթընի մէջ առանձին է անհատը եւ ամէն ինչ ինք պէտք է դիմագրաւէ ու իր ծախողանքը կամ յաջողութիւնը կախեալ է իրմէ ու միայն իրմէ: Յաջողութեան պարագային՝ հպարտութիւնն ու յաջողութեան պարգեւած

ջերմ գոհունակութիւնը իրն են: Եթէ վիժի, առանձին պիտի տոկայ հետեւանքներուն կամ կքի անոնց ծանրութեան տակ: Պատահական օգնողներ գտնուին թերեւս, բայց պատահականութեան վստահիլ պիտի նշանակէր աւելի խորացնել վիժումին դառնութիւնը»:


ԱՄՆ-ում հաստատվելուց հետո պրոֆ. Մ. Մարկոսյանն ակտիվ գիտական ու հասարակական գործունեություն է ծավալել, աշխատակցել բազմաթիվ հայ պարբերականների, այդ թվում նաեւ ՀՀԴ պաշտոնաթերթ «Դրօշակին»: Արցախյան շարժմանը զորակցել է առաջին օրերից, եղել «Ղարաբաղ» հանձնախմբի ատենապետ, Նյու Յորքում տեղի ունեցած բազմահազարանոց համագային ցույցի կազմակերպիչներից մեկն ու հանդիսավարը: Առաջին անգամ հայրենիքում եղել է ՀՀ ԳԱԱ հրավերով՝ 1991 թվականին: Հայտնի գիտնականներ պրոֆեսորներ Ծովակ Ավագյանի, Սիներիկ Հայրապետյանի եւ այլոց հետ միասին հիմնադրել է Հայաստանի կենսաբանների ընկերակցությունը, ընտրվել նրա առաջին փոխնախագահ:

Մ. Մարկոսյանը հայ համայնքի կյանքի կազմակերպման հարցում բարձր է գնահատել սփյուռքահայ գրականության ու գրողների դերը: Դա նույնը չէ, ինչ մայր հայրենիքում, ուրիշ առաքելություն ունեն գրականության մարդիկ Սփյուռքում: Նրանց տրված չէ գրել հաճույքի համար, գրել զուտ արվեստի համար. «...ժամանակի անցումը չէ փոխած հիմնական մտահոգութիւնը՝ հայ գրողը կամ մտաւորականը Սփյուռքի մէջ գեղագիտութենէն եւ արուեստէն անդին պարտաւորութիւն մը ունի ընթերցողներու հանդէպ... Ոչ ոք ոչ ոքի կ'արգելէ իր ուզածը գրելու իր ուզած ձեւով: Եթէ, սակայն, պիտի ունենանք պատասխանատուութիւնը հայ գրողի կամ մտաւորականի, հասարակական գործիչի, ապա պէտք է առնենք նաեւ պարտաւորութիւնը բանաձեւելու, թէ ի՞նչ են մեր առաջադրանքները եւ ինչո՞ւ հայերէնով կը գրենք: ... Կան ըսողներ, թէ կը գրեն իրենք իրենց համար միայն, առանց անդրադառնալու, թէ եթէ այդ է պատճառը ինչո՞ւ կը հրատարակեն իրենց գործերը ու հրատարակելէ ետք կը զանգատին ընթերցողներու պակասէն կամ անտարբերութենէն»: Հենց այս մտահոգությամբ է գիտնական Մարկոսյանը թակել սփյուռքահայ գրական աշխարհի դռները: Չի կարելի ասել, թե նրան գրկաբաց են ընդունել այնտեղ: Պատճառը թերեւս նրանից խիստ բարձրաժեք գրական ստեղծագործությունների ակնկալիքն է եղել, գուցե նաեւ նեղվածքը գրողական աշխարհում, բայց Մ. Մարկոսյանն իր ակնարկների հերոսներով, ովքեր ճակատագրի բերումով Սփյուռքի տարբեր անկյուններում հայտնված, որոշ դեպքերում կարելուր դիրք զբաղեցնող, որոշ դեպքերում էլ անպաճույճ կյանքով ապրող հայերն են, նրանց կյանքի ու անգամ վարքագծի փոքրիկ գույների նկարագրությամբ, սփյուռքահայ, եւ ինչու միայն սփյուռքահայ, ընթերցողի հանդէպ իր պարտավորությունն է կատարել, սփյուռքահայ, եւ ինչու միայն սփյուռքահայ, գրողի պարտավորությունը:

Էդիկ Անդրեասյան



## Տիգրան Բարխանաջյան



Ծնվել է 1974 թ., Գյումրում:

1985-1990 թթ. սովորել է Գյումրիի Մեկուրովի անվան արվեստի ուսումնարանում:

1991-1996 թթ. սովորել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան արվեստի ուղեգրում:

1996-2002 թթ. սովորել է Երևանի գեղարվեստի ակադեմիայում:

Մասնակցել է երիտասարդական ցուցահանդեսների:

2001 թ. մասնակցել է Դանստի 1700-ամյակին նվիրված ցուցահանդեսին (Երևան):

2003-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է:


Նրա աշխատանքներից կան Հայաստանի, ԱՄՆ-ի, Սանկտ Պետերբուրգի մասնավոր հավաքածուներում:

Տիգրան Բարխանաջյանի ստեղծագործությունները միանգամից գրավում են այցելուներին իրենց ինքնատիպ թեմատիկայով:

Շատ փորձված մեկը կարող է միայն նկատել նրա աշխատանքների արժեքը և գունեղ արվեստը: Մի բան դարձ է, սրանք արհեստավարժ գործեր են և առաջադիմական հեռանկարով: Կարևորը գաղափարն է, իսկ ամենակարևորը՝ որ նա ունի գաղափարներ և կարողանում է դրանք արտահայտել:





Լինի դա գծի աղավաղում, թե նկարչական արտահայտչամիջոցների համադրում կամ հակադրում: Մյուս կարևոր բանն այն է, որ նա չի վախենում ցույց տալ ֆիգուրալ նկարներ, չի վախենում ժամանակը դուրս հանել իր սահմաններից, վերափոխել իր իմացած ժամանակաշրջանը: «Երաժեշտության դասարանը», «Վերադարձ», «Ջրասան», «Ընթացիկ», «Ներքնայն» և այլն դրա վառ աղացույցն են:


Նրա աշխատանքները գունագեղ են ու թեթև, դարձ են, արտաբաց, ինչդեպ ներդաճակ երաժեշտությունը:




# ԴՐՕՇԱԿ

Պ ա ս Կ Ե Ր ա Մ Ր ա Կ





ԴՐՈՇԱԿ



PROTOCOL  
ON  
DIPLO  
BETWEEN  
REPUBLIC OF ARMENIA  
AND  
REPUBLIC OF TURKEY  
...  
Հայ Յնդափոխական  
Դաճնակցության  
առաջարկած  
փոփոխությունները  
Հայաստանի Հանրապետության  
և Թուրքիայի Հանրապետության  
միջև 2009 թ. օգոստոսի 31-ին  
նախատեսարագրված  
արձանագրություններում  
դեմ են